6989

# ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ III ՊԼԵՆՈՒՄԻ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

3КП2
Z-22

ՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1931

3 Կ Ո Չ
Հ - 22
1 DEC 2009
20 JAN 2006
CA 32-И / 92

# ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ III ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

6989

17.09.2013

ՊԵՏ. ԿՆ. ԳՐ... Гос Библио[illegible] ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5G261-66

Հրատ. № 1804

Գլավլիտ № 6723 (բ) Պատվեր № 4554 Տիրաժ 2000

Պետհրատի տպարան, Յերևան

## Բանգյուղտեսչության աշխատանքի կազմակերպումը տնտեսական շինարարության հերթական խնդիրների կապակցությամբ:

(Ընդունված ընկ. Ա. Անդրեևի զեկուցման առթիվ)

*1. Համ Կ (բ) Կ ԿՎՀ-ի պլենումը արձանագրում է յերկրի սոցիալիստական վերակառուցման հնգամյա պլանի կատարման վիթխարի հաջողությունները, վորոնք ձեռք են բերված կուսակցության 16-րդ համագումարի վորոշումների հիման վրա։*

*Կուսակցության լենինյան քաղաքականությունը և աշխատավորական մասսաների մեծագույն արտադրական խանդավառությունը լիովին ապահովում են հնգամյակի կատարումը չորս տարում. մի շարք խոշո-*

բազում ձեռնարկություններում և արդյունաբերության մի քանի առանձին ճյուղերում հնգամյակն արդեն կատարված է ժամանակից առաջ:

Առանձնապես ցուցադրական է գյուղատնտեսության կոլեկտիվացման հաջող զարգացումը. այդ գծով արդեն իսկ գերակատարված են հնգամյա պլանով ուրվագծված առաջադրանքները:

Այս հաջողությունները ձեռք են բերված շնորհիվ նրա, որ վճռական պայքար է մղվել կուսակցության գլխավոր գծի համար ընդդեմ օպորտունիստական տարրերի, որ բանվորական և գյուղացիական միլիոնավոր մասսաները մոբիլիզացիայի յեն յենթարկվել կուսակցության մարտական լոզունգների շուրջը՝ վճռաբար պայքարելու համար ընդդեմ աջ և «ձախ» օպորտունիստների, ընդդեմ հակահեղափոխական տրոցկիզմի մնացորդների, ընդդեմ ամեն տեսակ հաշտվողականների:

Մասսայական նախաձեռնության լայն ծավալումը (հանդիպական արդֆինպլան),



սոցմրցման և հարվածայնության զանազան տեսակները, բանվոր դասակարգից և գյուղացիության կոլտնտեսական մասսաներից տասնյակ և հարյուր հազարավոր նոր աշխատավորների առաջքաշումն ու մասնակցությունը կառավարման գործին, պետական միջոցների տնտեսումը և ներքին ռեսուրսների օգտագործումը յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության արմատական վերակառուցման համար, պետական տնտեսական և կոոպերատիվ (ու արհմիութենական) ապարատի զտումը խորհրդային իշխանության համար խորթ ու թշնամի տարրերից.—այս ամբողջ աշխատանքում Լենինի մտքի արդյունք ԿՎԿ. ԲԳՏ-ն և նրա տեղական մարմինները հավատարիմ զենք հանդիսացան կուսակցության համար:

2. Միաժամանակ Համ Կ(բ)Կ ԿՎԿ-ի պլենումն արձանագրում է, որ հնգամյակի յերրորդ, վճռական տարվա խնդիրների կատարումը համաչափ չի ընթանում ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում: Գտնելով, որ անպայման կիրառելի ու ռե-

ալ է հնգամյակի չորս տարում կատարման հիմունք հանդիսացող յերրորդ, վճռական տարվա համար կուսակցության ուրվագծած և բանվոր դասակարգի կողմից հավանություն գտած աշխատանքների պլանը,— Համ Կ (բ) Կ ԿՎՀ-ի պլենումն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր ընթացիկ տարվա առաջին կիսամյակում պլանները չեն միայն ու թերակատարվեցին ժողովրդական տնտեսության այնպիսի կարևոր ճյուղերում, ինչպիսիք են՝ սև մետալուրգիան, ածուխը, գունավոր մետաղները, տրանսպորտը, շինանյութերը և այլն։ Ժողովրդական տնտեսության վճռական ճյուղերի այս հետամնացությունը պետք է հաղթահարել ինչ գնով ուզում է լինի։

Համ Կ (բ) Կ ԿՎՀ-ի պլենումը գտնում է, վոր ԿՎՀ—ԲԳՑ-ն և նրա տեղական մարմինները իրենց աշխատանքի հիմք պետք է դարձնեն ընկ. Ստալինի ցուցմունքները տնտեսական շինարարության այն նոր խնդիրների մասին, վորոնք ծագում են համա-



ձայն փոխված իրադրության, այն է՝ ճիշտ կազմակերպել և նոր ձևով վերակառուցել ձեռնարկությունների ղեկավարությունը նոր պայմաններում, ճիշտ կազմակերպել բանվորական նոր կադրերի ընտրության գործը ձեռնարկություններում, լավագույն ձևով կազմակերպել աշխատանքը ձեռնարկություններում, ավելի ուշադիր վերաբերմունք ունենալ բանվոր դասակարգի նյութական և կուլտուրական սպասարկման, բնակարանների, կենցաղային հաստատությունների, մսուրների ու մանկապարտեզների շինարարության հարցերի հանդեպ, լիկվիդացիայի յենթարկել դիմազրկությունն ու հավասարեցումը բանվորների աշխատավարձի սիստեմում, ուժեղացնել նոր պրոլետարական տեխնիկական կադրերի ընտրության, դաստիարակման ու պատրաստման գործը և ճիշտ ոգտագործել հին մասնագետներին, արմատացնել ու ամրացնել տնտեսական հաշվարկը և ուժեղացնել ներարդյունաբերական կուտակումը ինքնարժեքի իջեցման միջոցով, կրճատել վերադիր ծախ-

քերն արդյունաբերության և շինարարության մեջ, պայքարել ամենախիստ ֆինանսական դիսցիպլինայի համար, առկա սարքավորումների և հումույթային ռեսուրսների առավել արտադրական օգտագործման համար։ Համ Կ(բ)Կ ԿՀՎ-ի պլենումը գտնում է, որ այս ամենի հիման վրա կապահովվի ընթացիկ տարվա համար կուսակցության ընդունած ժողտնտեսական պլանի ոչ միայն կատարումը, այլ և նրա գերակատարումն առանձին ճյուղերում։

3. Համ Կ(բ)Կ ԿՎՀ-ի պլենումը կարևորագույն խնդիրներից մեկն է համարում վճռական պայքար մղել ամենուրեք դիմազրկությունը լիկվիդացիայի ենթարկելու, ձեռնարկությունների և արտադրության կառավարման գործում միանձնյա ղեկավարության սիստեմն ամրապնդելու, կառավարման ապարատի և արտադրության յուրաքանչյուր աշխատավորի պատասխանատվությունը նրանց հանձնարարված աշխատանքի նկատմամբ ուժեղացնելու, ինչպես նաև դազգյահի ու գործիքների պահպանման և



խնամքի գործում յուրաքանչյուր բանվորին լիովին պատասխանատու դարձնելու համար։

ԿՎՀ-ի պլենումը նաև ընդգծում է այն հանգամանքը, որ անհրաժեշտ է հիմնարկություններում ևս անխնա պայքարել ամեն մի աշխատողի նկատմամբ-նրան հանձնարարված աշխատանքի հանդեպ որոշակի անձնական պատասխանատվություն սահմանելու համար։

Իբրև կարևորագույն մի խնդիր, ԿՎՀ-ի պլենումը առանձնապես շեշտում է Լենինի 1922 թ. հետևյալ ցուցմունքը—«Մարդկանց ընտրություն, կատարելիք գործի համար անհատական պատասխանատվության սահմանում, փաստական աշխատանքի ստուգում»։

4. Մեծագույն չարիք համարելով ձևական, թղթի ղեկավարությունը, ԿՎՀ-ն առաջարկում է կռվել նրա դեմ, աշխատելով, որ տնտեսական մարմինների ղեկավարությունը լինի կոնկրետ և օպերատիվ։ Ձեռնարկության յուրաքանչյուր ղեկավար պարտավոր է ոչ միայն ճշտիվ իմանալ յուրա-

քանչյուր ցեխի ընդհանուր դրությունը, այլ և ղեկավարել արտադրության պրոցեսները, տիրապետելով արտադրության տեխնիկային և իմանալով աշխատանքի այն կոնկրետ թերությունները, վորոնցից կախված է արտադրական ծրագրի և արդֆինպլանի կատարման դանդաղումը։ Այդպիսի կոնկրետ ղեկավարության համար պայքարելը ՎՀ-ԲԳՏ-ների տեղական մարմինների աշխատանքի հիմնական բովանդակությունը պետք է կազմի այս ու այն ձեռնարկության կամ հիմնարկության աշխատանքն ստուգելիս։ Կոնկրետ ղեկավարության ապահովման խնդրից ելնելով, պլենումն առաջարկում է նախագահությանը մշակման յենթարկել արդյունաբերական միավորումների փոքրացման և ձեռնարկությունների կառավարման գործի պարզացման հարցը։

5. ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները հատուկ ուշադրություն պետք է նվիրեն տնտեսական հաշվարկի ամենախիստ կիրառմանը, աննկուն պայքարելով կրճատելու ծախքե-



րը և առաջիկայում ամենախիստ կերպով կրճատելու վերադիր ծախքերը, հատկապես վարչական ղեկավարման ծախքերը, վորոնք մի քանի կազմակերպություններում (կոոպերացիա, կոլտնտեսությունների վարչություններ) յերբեմն հասնում են հրեշային չափերի։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները պետք է նկատի ունենան, վոր տնտեսական հաշվարկը հնարավորություն է տալիս «կուտակման նոր աղբյուրներ շոշափելու» (Ստալին)։

Հենց տնտեսական հաշվարկն է, վոր պահանջում է խստիվ կիրառել խնայողության և արտադրության ռացիոնալացման ռեժիմը։ Հենց տնտեսական հաշվարկն է, վոր պահանջում է սիստեմատիկ կերպով պայքարել արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար, սոցիալիստական շինարարությունն էլ ավելի բարձր տեմպերով ծավալելու համար՝ միջոցների հետագա կուտակում կատարելու նկատառումով։

6. ՎՀ-ԲԳՏ-ները պետք է ակտիվ կերպով մասնակցեն խորհրդային մասնագիտացված առևտրի (կոոպերատիվ և պետական) ծավալման միջոցառումները կիրառելու, այնտեղ իսկական տնտեսական հաշվարկ իրագործելու և մատակարարումը արտադրական պլանների հետ շաղկապելու գործին (բանվորական բուջեյի ընդգրկում, գների ճիշտ կազմություն, հարվածայիններին գերադասող մատակարարում)։ Ընդ վորում ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները չպետք է թույլ տան դիմազրկված ղեկավարության մեթոդները մատակարարման գործում, տընտեսական հաշվարկի խեղաթյուրումները, վորոնք արտահայտվում են այն բանում, վոր տնտեսում են հասույթաբերության հիմունքները կամ գների լարումով շահույթի յետևից են ընկնում և այլն։ ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները պետք է խիստ պատիժ սահմանեն ամեն մի թափթփվածության համար կոոպերատիվ-մատակարարման ապարատի այն աշխատավորների նկատմամբ, վորոնք անթույլատրելի անուշադրություն են ցույց



տալիս սպառողի հանդեպ և անփույթ են վերաբերվում կորուստների դեմ պայքարելու ու մատակարարման յեղած ռեսուրսները լիովին օգտագործելու խնդրում։

Կուսակցության վերջին վորոշումները բերքահավաքի կամպանիայի անցկացման (այդ թվում՝ բանջարեղեններն հավաքելը և ժամանակին պահեստներ փոխադրելը), տրանսպորտի (մթերքների փոխադրման նախապատրաստություն), կոմունալ տնտեսության, ածխարդյունաբերության և այլ խընդիրների մասին, ամենայն պարզորոշությամբ պետք է արտացոլվեն մատակարարման միջոցառումների մեջ։ Այդ վորոշումների ստուգումն ու կատարումը պետք է լինեն ՎՀ-ԲԳՏ-ների մշտական վերահսկողության ներքո։

Ամենախիստ կերպով վարելով շրջանառության ծախքերը կրճատելու, կոոպերատիվ ապարատը պարզեցնելու ու եժանացնելու և այն մասսաներին մոտեցնելու գործը, ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները իրենց մոտակա խնդիրը պետք է դնեն՝ մատակա-

րարման և կոոպերատիվ ապարատը հասցնել օրինակելի վիճակի։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները մատակարարման հարցի և հատկապես մատակարարման ու կոոպերատիվ ապարատի արմատական բարելավման ուղղությամբ իրենց կատարելիք ամբողջ աշխատանքի մեջ պետք է ներգրավեն բանվորական մասսաների և կոլտնտեսականների լայն խավերին, այդ աշխատանքին անպայման մասնակից դարձնելով արհմիություններին և կոմյերիտմիությանը։

7. Գյուղատնտեսության ծավալման ասպարեզում ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները մոտակա ժամանակամիջոցում իրենց ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացնեն ԿԿ-ի հունիսյան պլենումի առաջադրած խնդիրների վրա։ Այդ խնդիրներից կարևորագույններն են — պայքարել կոլտնտեսությունների աշխատանքի ճիշտ կազմակերպման, գործավարձի կիրառման, կոլտնտեսությունների յեկամուտների ժամանակին ու ճիշտ բաշխման և հաշվառման



գործի կազմակերպման համար. պարզացնել և կրճատել տնտեսության կազմակերպչական ղեկավարման ծախքերը կոլտնտեսություններում, բարելավել կոլտնտեսականների կուլտուրական և կենցաղային սպասարկումը, ճիշտ կազմակերպել արտագնացությունը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և ավելացնել տնտեսությունների ապրանքայնությունը կոլտնտեսություններում։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները պետք է պայքարեն կուսակցության գծի ամեն տեսակի խեղաթյուրումների դեմ կոլտնտեսական շինարարության ասպարեզում, այն է՝ կամավորության սկզբունքը խախտելու, հասարակական նախաձեռնությունը հրամաններով փոխարինելու, կուլակային տարրերի դեմ մղվող պայքարը թուլացնելու և համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը՝ վորպես դասակարգի՝ վերացման քաղաքականության ասպարեզում հայտնաբերվող ոպորտունիստական պասիվության դեմ։ Անհրաժեշտ է նաև յեռան-

դուն պայքարել կուսակցության գծի խոտորումների դեմ անհատական չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունների նկատմամբ։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմիններն անդուլ վերահսկողության տակ պետք է վերցնեն արդյունաբերության այն ձեռնարկությունների աշխատանքը, վորոնք գյուղատնտեսական հումույթի մշակման, բերքի հավաքման և նրա նախնական մշակման համար գյուղատնտեսական մեքենաներ են արտադրում, ստուգեն թե՛ ուրվագծված արտադրական պլանների ժամանակին կատարումը և թե՛ գյուղատնտեսական մեքենաների վորակը, հետևեն վորպեսզի ժամանակին պարպվեն և խորհտնտեսություններին, ՄՏԿ-ներին ու կոլտնտեսություններին ուղարկվեն գյուղատնտեսական մեքենաները։ Նմանապես անհրաժեշտ է հետևողականորեն աշխատել, վորպեսզի կատարվի հանքային պարարտանյութերի արտադրության պլանը և նրանք ժամանակին պարպվեն ու տեղերն ուղարկվեն։



Չսահմանափակվելով հացահատիկի բնագավառով, ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները հատուկ ուշադրություն պետք է նվիրեն անասնապահության հարցերին թե կոլտնտեսություններում և թե «Սկոտովոդ»,-ի «Սվինովոդ»-ի, «Ովցեվոդ»-ի, ինչպես նաև թռչնաբուծական խորհտնտեսություններում. ընդ վորում բացառիկ ուշադրություն պետք է դարձնել 1931 թ. կերի այնպիսի բազա ստեղծելու խնդիրն, վոր բավական լինի լիովին իրագործելու անասնապահության ասպարեզում կուսակցության ընդունած ծրագիրը։ ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները նույնպես մշտական հսկողություն պետք է սահմանեն տեխնիկական կուլտուրաների (բամբակ, վուշ, ծխախոտ և այլն) ծրագրի կատարման վրա ինչպես կոլտնտեսություններում, այնպես էլ խորհտնտեսություններում։

8. ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները մշտական հսկողության տակ պետք է վերցնեն.

ա) Արդյունաբերության համար վորակյալ բանվորներ պատրաստելու գործը այն-

5626/-66
Библиотека Института Востоковедения ՀՍՍՌ - Арм ССР ... Наук СССР

պիսի քանակությամբ, որ լիովին ապահովվի նոր կառուցվող ձեռնարկությունները ժամանակին գործի գցելու խնդիրը․

բ) Արդյունաբերության և գյուղատնտեսության համար ինչպես հատուկ ԲՏՈՒՀ-ների և ԲՈՒՀ-երի, այնպես էլ սիստեմատիկ կերպով վորակավորումը բարձրացնելու հնարավորություն տվող հատուկ դասընթացների միջոցով ղեկավար կադրեր պատրաստելու գործը։

գ) Մասնագետների նորմալ աշխատանքը, պայքարելով նրանց նկատմամբ թույլ տրվող ամեն տեսակ խոտորումների դեմ, պայքարելով ձեռնարկություններում ինչպես խորհրդային, այնպես էլ օտարյերկրացի մասնագետներին ռացիոնալ կերպով օգտագործելու համար։

9. «Նվազագույն ժամանակամիջոցում տեխնիկական—տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» լոզունգի իրագործումն ամբողջ վճռականությամբ առաջադրում է գիտության և նոր տեխնիկային



տիրապետելու հարցը։ Այս կապակցությամբ ՎՀ-ԲԳՏ-ների մարմիններն էլ ավելի մեծ ուշադրություն պետք է նվիրեն գիտական-հետազոտական ինստիտուտների աշխատանքի բարելավման խնդրին, այդ աշխատանքը արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման վիթխարի պահանջների հետ ավելի մեծ չափով շաղկապելու իմաստով։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները մեծ ուշադրություն պետք է դարձնեն նաև ռացիոնալացման և գյուտարարության հարցերին տնտեսության բոլոր ճյուղերում, միջոցներ ձեռք առնելով շուտափույթ կերպով իրագործելու մեր տեխնիկան առաջ մղող և արտադրությունը բարելավող ու եժանացնող գյուտերն ու ռացիոնալիզատորական առաջարկները, այդպիսիք վերցնելով իրենց անմիջական հսկողության տակ։

10. Առաջիկա շրջանում ՎՀ-ԲԳՏ-ների համար աշխատանքի կարևորագույն խնդիրըն է մնում խորհրդային և տնտեսական ապարատում բուն դրած բյուրոկրատիզմի

դեմ պայքարելը և այդ ապարատի բարելավման ու եժանացման համար սիստեմատիկ աշխատանք կատարելը։

Արձանագրելով այն դրական արդյունքները, վորոնք ձեռք են բերված պետական և տնտեսական ապարատը խորթ ու թշնամական տարրերից ազատելու նպատակով անցկացված զտման հետևանքով, ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները պետք է շարունակեն խորհրդային ապարատի զտման աշխատանքը, հետագայում այդպիսին անցկացնելով վոչ միայն սոցիալապես թշնամի, քայքայված ու բյուրոկրատացած տարրերին ապարատից վտարելու տեսանկյան տակ, այլ և նպատակ դնելով ստուգման յենթարկել ապարատի աշխատանքի եյությունը, ստուգման յենթարկել ապարատի ղեկավար աշխատողներին և կարողանալ նրանց ղեկավարությունը վերակառուցել նոր պայմաններին համապատասխանող նոր ձևերով։

ՎՀ-ԲԳՏ-ները պետք է շարունակեն ամենաանողոք կերպով պայքարել ապարատի ուռճացման և թանգացման դեմ, սիստեմա-



տիկ ստուգման յենթարկել և առավելագույն չափով կրճատել վարչական կառավարման ծախսերը։

Խորհրդային ապարատի կազմակերպման ուղղությամբ ծավալելիք իրենց սիստեմատիկ աշխատանքի ընթացքում, ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները պետք է յելակետ ունենան այն հանգամանքը, վոր նրանք իրենց վրա չպետք է վերցնեն վողջ խորհրդային ու տնտեսական ապարատի անմիջապես ու ամբողջապես բարելավելու խնդիրները, այլ իրենց աշխատանքը կենտրոնացնեն առանձին բնագավառներում։ ԿՎՀ-ի պլենումը հավանություն է տալիս ԿՎՀ-ի նախագահության այն վորոշմանն, ըստ վորի ՎՀ-ԲԳՏ-ները մոտակա ժամանակում իրենց աշխատանքը պետք է կենտրոնացնեն մատակարարման ապարատը (Մատժողկոմատը և սպառկոոպերացիան) վերակառուցելու և բարելավելու ուղղությամբ։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները հատուկ ուշադրություն պետք է նվիրեն կատարման ստուգման գործին խորհրդային և տնտեսա-

կան մարմիններում, վորն իր հերթին պետք է բարելավի խորհրդային ապարատի վողջ աշխատանքը։

ՀՎԿ-ի պլենումը հատուկ ուշադրություն է հրավիրում ստորին խորհրդային ապարատի, այն է՝ շրջանային և գյուղական ապարատի հետագա ամրացման վրա։

11. Նոր արդյունաբերական բնագավառների—արդյունաբերության և գյուղատնտեսության նոր ճյուղերի զարգացումը ՎՀ-ԲԳՏ-ների աշխատանքն ավելի բարդ ու ավելի բազմակողմանի յե դարձնում և ՎՀ-ԲԳՏ-ների բոլոր աշխատակիցներից պահանջում է ավելի վորակյալ մոտեցում հանդեպ իրենց աշխատանքի։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները, մասնակցելով այս վիթխարի չափով աճած խնդիրների լուծմանը, չպետք է թույլ տան իրենց ապարատների ընդարձակումը։ Վոչ թե ապարատի ընդարձակումը, այլ նրա (ապարատի) վորակավորման առավելագույն բարձրացումն է, վորը պետք է դառնա կարևորագույն խնդիր ՎՀ-ԲԳՏ-ների ապարատների ամրացման գործում։



ՀՎԿ-ի պլենումը գտնում է, վոր առաջիկա շրջանում ՎՀ-ԲԳՏ-ների առաջ դրված խնդիրների հաջող կատարումն ապահովող պայման է հանդիսանում այն, վոր ՎՀ-ԲԳՏ-ները եվ ավելի լայն հասարակական բազա առաջ քաշեն և հենվեն նրա վրա (արհմիություններ, կոմյերիտմիություն բանվոր հարվածայիններ, Բուհ-երի և տեխնիկումների ուսանողություն, կոլտնտեսականներ)։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմիններն իրենց աշխատանքը պետք է տանեն հիմք ունենալով բանվորների և կոլտնտեսականների լայն կադրերի եվ ավելի լայն ներգրավումը վերահսկողության, կատարման ստուգման և թերությունների անմիջական շտկման գործին։ Զարգացնել քաղաքային և գյուղական խորհուրդների ԲԳՏ-ի սեկցիաները և ամրացնել բանվորական շեֆությունը հիմնարկությունների ու կոլտնտեսությունների վրա, վորպիսի փորձը արդարացրել է իրեն։ Ամեն կերպ խրախուսել սոցհամատեղու-

թյան զարգացումը, որ բանվորներին խորհրդային ապարատի հետ կապելու և նրանց վերահսկողությունն ու ազդեցությունը այդ ապարատի վրա տարածելու տեսակետից ունի վիթխարի նշանակություն։ Ուժեղացնել ձեռնարկություններում, խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում ՎՀ-ԲԳՏ-ին օժանդակող խմբակներ ստեղծելու աշխատանքը, առաջին հերթին նրանց կազմակերպումն ավարտելով արդյունաբերական և գյուղատնտեսական ամենագլխավոր շրջաններում՝ ժամանակին իմանալու և ուղղել կարողանալու համար կարևորագույն ձեռնարկությունների, խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների բոլոր ցավոտ կողմերը։ ՎՀ-ԲԳՏ-ները պետք է ղեկավարեն այդ խմբակներին, պետք է օգնեն և հրահանգներ տան նրանց աշխատանքի ընթացքում։

12 ՎՀ-ԲԳՏ-ների սիստեմում կարևորագույն կազմակերպություններ են հանդիսանում շրջանային ՎՀ-ԲԳՏ-ները, որոնց աշխատանքը յեթե բարձր աստիճանի վրա



չդրվի և որոնք յեթե կադրերով չամրացվեն, ապա միանգամայն անկարելի կլինի կատարել ՎՀ-ԲԳՏ-ների առաջ դրված խնդիրները ձեռնարկությունների, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, տեղական խորհրդային, կոոպերատիվ ու տնտեսական մարմինների նկատմամբ և լայն մասսաներին ել ավելի մեծ չափով ներգրավել ՎՀ-ԲԳՏ-ների աշխատանքին։ Ուստի հանրապետական, յերկրային և մարզային ՎՀ-ԲԳՏ-ների կարևորագույն խնդիրներից մեկն է՝ ապահովել շրջանային ՎՀ-ԲԳՏ-ների ակտիվ գործունեությունը, առավելագույն չափով ծավալել նրանց նախաձեռնությունը, բարելավել նրանց կապը հանրապետական ու մարզային ՎՀ-ԲԳՏ-ների և ԿՎՀ-ԲԳՏ-ի հետ և առավելագույն չափով օգտագործել նրանց աշխատանքի փորձն ու արդյունքները ՎՀ-ԲԳՏ-ների վերադաս մարմինների կողմից։

13. ՎՀ-ԲԳՏ-ի մարմինները պետք է ակտիվ կերպով համախմբեն հարվածայինների, մասնագետների, առանձին ձեռնարկությունների

և այլոց նախաձեռնությունը, լավագույն փորձը, ղեկավարության ամեն տեսակ լավագույն մեթոդները և մեր տնտեսական աշխատանքում ձեռք բերած հաջողությունները։

Այս ամենը նրա համար է անհրաժեշտ համախմբել ԲԳՏ-ի շուրջը, վորպեսզի ԲԳՏ-ն լինի վոչ միայն այնպիսի մի ապարատ, վորտեղ գան բողոքելու անկարգությունների համար, այլ և այնպիսի մի կազմակերպություն, վորտեղ բերվեն բոլոր լավագույն նվաճումները, վորը հնարավոր լինի ընդհանրացնել և փոխադրել այլ ճյուղեր ու այլ կազմակերպություններ։

14. ՎՀ-ԲԳՏ-ների աշխատանքը, համաձայն նոր խնդիրների, պետք է ընթանա նրանց աշխատանքն ավելի մեծ չափերով ակտիվացնելու, ԲԳՏ-ի աշխատանքի բոլոր բնագավառների այս ու այն հարցերի ուսումնասիրությանն ավելի ուշադիր և ավելի խորը մոտեցում ունենալու նշանաբանով։ Մասնավորապես անհրաժեշտ է միջոցներ



ձեռք առնել բանգյուղտեսչական աշխատանքում իրագործելու հետևյալ մեթոդները։

ա) Ուժերը չցրել, այլ շարունակ կենտրոնանալ գլխավորի վրա, բ) աշխատանքի մեջ ճարպիկորեն զուգակցել այսպես կոչված «մանրուքը» և խոշոր պրոբլեմները. գ) ուժեղացնել պատասխանատվությունը ԲԳՏ-ի մարմիններում. դ) յուրաքանչյուր սկսած գործը անպայման մինչև վերջը հասցնել, ե) իրենց կազմակերպչական կառուցվածքով ՎՀ-ԲԳՏ-ների ապարատները պետք է լինեն ըստ ամենայնի ճկուն։

15. Պետք է միջոցներ ձեռք առնել առավելագույն չափով բարձրացնելու ՎՀ-ԲԳՏ-ների աշխատանքը՝ առանձին կարևորագույն հարցերի ավելի խորունկ ուսումնասիրության իմաստով։ ՎՀ-ԲԳՏ-ները պետք է վոչ միայն խստիվ քննադատեն այս կամ այն թերությունները, այլ գլխավորապես իրենց առաջարկներով գործնական ոգնություն ցույց տան նրանց շուտափույթ վերացման համար։ ՎՀ-ԲԳՏ-ները պետք է աշխատեն, վոր իրենց ընդունած վորոշում-

ները լինեն խիստ պարզորոշ, նրանց կատարման համար վորոշակի ժամկետներ սահմանեին և պատասխանատու կատարածուների նշանակեին։

Դրան զուգընթաց, պետք է ուժեղացնել ՎՀ-ԲԳՏ-ների ինչպես առանձին աշխատողների, այնպես և ՎՀ-ԲԳՏ-ների ամբողջ մարմինների պատասխանատվությունը նրանց կատարած աշխատանքի նկատմամբ։ Յեթե անկարգություններ են պատահում տնտեսության այս կամ այն բնագավառում, ապա տնտեսական մարմինների հետ միասին այդ անկարգությունների համար պատասխանատու յե նաև ՎՀ-ԲԳՏ-ի այն աշխատակիցը կամ աշխատակիցների այն խումբը, վորը նշանակված է հսկելու այդ բնագավառում, հատկապես այն դեպքերում, յերբ տվյալ աշխատակիցը կամ տվյալ ՎՀ-ԲԳՏ-ն այդ մասին ժամանակին ազդանշան տված չեն լինի վերադաս կազմակերպություններին։

Հանդիմանություններով պատժելու պրակտիկան պետք է մինիմումի հասցնել, ուժե-



ղացնելով դաստիարակության և աջակցության տարրերը։

Այն դեպքերում, յերբ իրոք անհրաժեշտ է պատիժ գործադրել, ապա, իբրև կանոն, պետք է կիրառել ներգործության ավելի խիստ միջոցներ։

16. ԿՎՀ-ի պլենումն արձանագրում է, վոր անխտիր բոլոր հիմնարկություններում և կազմակերպություններում կատարման սիստեմատիկ ստուգում կազմակերպելու մասին կուսակցության և կառավարության տված դիրեկտիվը միանգամայն անբավարար չափով է կատարվում։ Իսկ ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները հարկ յեղած հաստատակամությունը ցույց չեն տվել այդ դիրեկտիվի կենսագործումն ապահովելու համար։

ԿՎՀ-ի պլենումն առաջարկում է բոլոր տնտեսական, կոոպերատիվ, խորհրդային և արհմիութենական կազմակերպությունների ղեկավարներին անմիջապես կազմակերպել կատարման ստուգման աշխատանքը, հատկապես այդ աշխատանքը ղեկավարելու համար նշանակել միանգայն վորակյալ աշխա-

տողների։ Ընդ վորում սահմանել, իբրև կանոն, այն, վոր կատարումը ժամանակին ստուգելու անմիջական պատասխանատվությունն առաջին հերթին ընկնի համապատասխան հիմնարկության, կազմակերպության կամ պատասխանատու կատարածվի վրա։ Կատարման ստուգման համար կազմակերպվելիք սեկտորները կամ խմբերը հսկում ու ղեկավարում են այս աշխատանքը և ձեռք են առնում վերահսկողության կիրառումն ըստ եյության ապահովող բոլոր անհրաժեշտ միջոցները։

17. ԿՎՀ-ի պլենումը հավանություն է տալիս այն պայքարին, վորն սկսել է ԿՎՀ-ի նախագահությունը բազմակի վերահսկողության դեմ։

Պլենումը հանձնարարում է ԿՎՀ-ի նախագահությանը անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել այդ գործի հետագա վճռական կարգավորման ուղղությամբ, այնպիսի հաշվով, վորպեսզի ամեն տեսակ հետազոտությունների թիվը անհրաժեշտ մինիմումին հասցվի, ստուգումից ու վերահսկողությունից



վտարելով ձևականության տարրերը, ուժեղացնելով ինչպես ձեռնարկությունների, այնպես ել նրանց ղեկավարների ըստ եյության ստուգումը, չբավարարվելով միմիայն վիճակագրական ցուցանիշներով։

Զանազան տեսակի տնտեսական ու խորհրդային հիմնարկությունների ստուգման յենթարկելիս հարկավոր է գլխավոր ուշադրությունը դարձնել այն բանի վրա, թե ինչպես են կատարվում վորակական ցուցանիշները, ինչպես են դրված դիսցիպլինան և կատարման ստուգումը տվյալ հիմնարկությունում, աշխատանքի փաստական ղեկավարություն ցույց տալիս է արդյոք այդ հիմնարկության գլուխը կանգնած ղեկավարը և արդյոք աշխատում է ինքն իր վրա, վորպեսզի ել ավելի տիրապետի իրեն հանձնարարած գործին։

Հարկավոր է սահմանել կարևորագույն ձեռնարկությունների և շինարարությունների շրջանակ, թե վորոնք կարող են հետազոտվել ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի թույլատվությամբ, և վորոնք՝ հանրապետական,

ցերկրային և մարզային ՎՀ-ԲԳՏ-ների թույլատվությամբ։

18. Վողջ կուսակցական, խորհրդային և արհմիութենական ակտիվի վորակավորման բարձրացման աշխատանքում ամենալուրջ խոչընդոտ ե հանդիսանում այն հանգամանքը, վոր հասարակական աշխատանքը կարգավորված չե (անհամար նիստեր, հանձնաժողովներ, պլենումներ և այլն)։

ԿՎՀ-ի պլենումը առաջարկում ե ՎՀ-ԲԳՏ-ներին, առաջին հերթին խոշորագույն կենտրոններում, նշել 1—2 շրջան, վորտեղ և միջոցներ ձեռք առնել վորոշ չափով կարգավորելու հասարակական աշխատանքը։

Հանձնարարվում ե ԿՎՀ-ի նախագահությանը, հիմնվելով այս փորձի ուսումնասիրության վրա, նշել հասարակական աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները, այն հաշվով, վորպեսզի ստեղծվեն այնպիսի պայմաններ, վորոնց մեջ ակտիվը իրոք հնարավորություն ունենա զբաղվելու իրեն հանձնարարված գործով և սիստեմատիկ աշխատելու իր վորակավորման



բարձրացման ուղղությամբ, ուսումը զուգակցելով մշխատանքի և հանգստի հետ։

ՎՀ-ԲԳՏ-ի յուրաքանչյուր աշխատող (և այդպիսով ամբողջ ՎՀ-ԲԳՏ-ն) իրեն հանձնարարված աշխատանքի բարձրության վրա կանգնած կլինի միայն այն պայմանով, յեթե նա սիստեմատիկ կերպով աշխատի իր գիտելիքների ավելացման ուղղությամբ։ Առանց աշխատանքից կտրվելու տեխնիկային տիրապետելու լոզունգի իրագործման համար մղվող պայքարում ՎՀ-ԲԳՏ-ների աշխատողները պետք ե լինեն առաջին շարքերում։

19. Քանի վոր բյուրոկրատիզմի դեմ պայքարելը առաջվա պես հանդիսանում ե ՎՀ-ԲԳՏ-ների մարմինների կարևորագույն խնդիրներից մեկը, ուստի ՎԿ-ԲԳՏ-ների մարմինները պետք ե առաջին հերթին իրենց սեփական ապարատներում կարողանան պարզություն մտցնել գանձատներ և ամեն տեսակ այլ հայտարարություններ իր ժամանակին ստուգելու, գործերին արագ լուծում տալու, այս կամ այն հայտա-



№ 4545—2

բարությունը տվողին գործի ընթացքի կամ, նրա լուծման մասին ժամանակին իրազեկ դարձնելու աշխատանքում։

Բողոքների բյուրոների աշխատանքի փորձը ցույց տվեց, որ այդ բյուրոների աշխատանքի ճիշտ կազմակերպումը իրական միջոցներից մեկն է հանդիսանում կուսակցության գծի ամեն տեսակի խեղաթյուրումներ ու խոտորումները, խորհրդային ապարատի առանձին կառուցվածքների, իսկ երբեմն էլ ամբողջ կազմակերպությունների, ուղղակի հանցագործությունները շտկելու համար։

ԿՎՀ-ի պլենումն առաջարկում է միջոցներ ձեռք առնել էլ ավելի ուժեղացնելու բողոքների բյուրոների, մանավանդ ՎՀ-ԲԳՏ-ի ստորին մարմիններին կից գործող բյուրոների աշխատանքը։ Տեղական մարմիններն էլ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնեն բողոքների բյուրոների վրա և նրանց շուրջը համախմբեն ամուր ակտիվ ոչ միայն կուսակցականներից ու կոմյերիտականներից, այլ և բանվորների ու կոլտնտեսականների անկուսակցական մասսա-



յից։ Միմիայն այդպիսի ակտիվ ունենալու, նրանց սիստեմատիկ կերպով ղեկավարելու ոչ միայն անհատական բնույթ կրող գանգատներին, այլ և ամեն տեսակ արտադրական անհարթությունների վերաբերյալ գանգատներին արագ լուծում տալու պայմանով է, որ բողոքների բյուրոները կդառնան խորհրդային, տնտեսական և կոոպերատիվ ապարատներում գեռևս գոյություն ունեցող թերություններն ու խեղաթյուրումները շտկելու իսկական միջոցներ։

20. Վճռաբար պայքարելով տվյալ էտապի գլխավոր վտանգ աջ օպորտունիզմի և «ձախ» թեքման դեմ, ջախջախելով տրոցկիստներին և պայքարելով տրոցկիստական իդեաները կուսակցության շարքերից ներս քաշելու անգամ ամենափոքրիկ փորձերի դեմ, կուսակցության շարքերը մաքրելով քայքայված ու անպետք տարրերից և պայքարելով լենինյան ազգային քաղաքականության խոտորումների դեմ, կուսակցությունն զգալիորեն բարելավեց իր կազմը, ամրացրեց և բազմացրեց իր շարքերը։ Մի-

միայն դրա շնորհիվ էր, որ կուսակցությունը կարողացավ և կարողանում է կատարել իր առաջ դրված վիթխարի խնդիրները։

Հետագայում ևս համառ ու վճռական պայքար մղելով օպորտունիզմի դեմ տեսականում ու գործնականում, հաշտվողականության դեմ, իր շարքերից անխնա վտարելով յերկերեսանիներին, պայքարելով աջ օպորտունիստների, իբրև մեր կուսակցության ներսում բույն դրած կուլակային ագենտուրայի, և «ձախ» օպորտունիստների դեմ, անխնա վտարելով վաղուց հակահեղափոխության դիրքերն անցած տրոցկիստներին,—վերահսկիչ հանձնաժողովները միաժամանակ հատուկ ուշադրություն պետք է նվիրեն բանվոր դասակարգի և աշխատավորական լայն մասսաների կարիքների հանդեպ ձևական, չինովնիկական, բյուրոկրատական անհոգի վերաբերմունք ցույց տալու փաստերին առանձին կոմունիստների կողմից, այդպիսի կոմունիստներին վտարելով Համ Կ(բ)Կ-ի շարքերից։



Վերոհիշյալ պայմանների հիման վրա ուժեղացնելով և վերակառուցելով աշխատանքը, ՎՀ-ԲԳՏ-ները կդառնան էլ ավելի ուժեղ լծակներ կուսակցության ձեռքում՝ պայքարելու նրա գլխավոր գծի կիրառման, պետապարատի վճռական բարելավման, տնտեսական պլանի կատարման, սոցիալիստական շինարարության ասպարեզում կուսակցության վերացման տեմպերի ապահովման համար։

## Ապահովել Համ Կ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի վորոշումների կատարման ստուգումը

(Ընդունված ընկ. Ի. Ակուլովի զեկուցման առթիվ)

Համ Կ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի վորոշումները գարնանացանի նախնական արդյունքների և բերքահավաքի կամպանիայի խնդիրների, յերկաթուղային տրանսպորտի, Մոսկվայի քաղաքային տնտեսության և ԽՍՀՄ-ի քաղաքային տնտեսու-

թյան զարգացման մասին, մեր հեղափոխության ընթացիկ ետապի ընդհանուր քաղաքական խնդիրների վերաբերյալ որոշումների հետ միասին, ամբողջ կուսակցության առաջ դրին հերթական կոնկրետ խնդիրներ, որոնց կատարումը պարտադիր պայման է հանդիսանում սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունների համար:

Այդ որոշումները ժամանակին կատարելը կախված կլինի այն բանից, թե ինչ չափով կապահովվի նրանց կատարման վերահսկողությունն ու ստուգումը, ինչպիսի հաջողությամբ կկազմակերպեն այդ սիստեմատիկ ստուգումը կուսակցության վերահսկիչ մարմինները և բանվորա-գյուղացիական տեսչության մարմինները, հենվելով բանվորական ու կոլտնտեսական թե կուսակցական և թե անկուսակցական ակտիվի ամենալայն մասսաների վրա:

ԿՎՀ-ի III պլենումը ՎՀ-ԲԳՏ-ի բոլոր մարմիններին առաջադրում է Համ Կ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի որոշումների



կատարման սիստեմատիկ ստուգում կազմակերպելու կարևորագույն խնդիրը:

## I. Բերքահավաքի կամպանիան

Բերքը ժամանակին հավաքելու համար, որպիսին արդեն սկսվել է շատ շրջաններում, Համ Կ (բ) Կ ԿՎՀ-ի պլենումն առաջարկում է ՎՀ-ԲԳՏ-ների մարմիններին ստուգելու, առաջին հերթին, հետևյալ հիմնական միջոցառումների կիրառումը.—

### Խորհրդտնտեսություններում

1) Գյուղատնտեսական բոլոր ճյուղերի խորհտնտեսությունների ապահովումը բանվորական ուժով (կոլտնտեսությունների հետ պայմանագրեր կնքած ունենալը, բանվորների հասարակական սննդի կազմակերպումը, բանվորների կուլտուր-կենցաղային սպասարկումը):

2) Խորհտնտեսությունների բոլոր աշխատանքների կազմակերպումը գործավարձի հիմունքով, սոցմրցման ու հարվածայնության զարգացումը, քարշող ուժի և բեր-

քահավաքման մեքենաների (հատկապես կոմբայնների, խուրձ կապող մեքենաների և բարդ քամհարների) առավելագույն բեռնավորումը, ինչպես նաև դիմազրկության և աշխատավարձի հավասարացման ամեն տեսակ դրսևորումների վերացումը։

3) Խորհտնտեսությունների ապահովումը վորակյալ կադրերով, հատկապես բերքահավաքման մեքենային տեխնիկայի լրիվ յուրացման համար անհրաժեշտ կադրերով (կոմբայներներ, տրակտորիստներ, շոֆերներ)։

4) Տրակտորային պարկի, բերքահավաքման մեքենաների և խորհտնտեսական տրանսպորտի վերանորոգման ընթացքը։

5) Բերքահավաքի աշխատանքների շաղկապումը աշնանացանի պլանի կատարման, աշնանահերկի, պարենային հացը սահմանված ժամկետներին և սահմանված չափով փոխադրելու և պետությանը հանձնելու աշխատանքների հետ։



## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄՏԿ-ՆԵՐՈՒՄ

Կոլեկտիվացման ասպարեզում կուսակցության ձեռք բերած հաջողությունները ներկայումս առանձին համառությամբ առաջադրում են կոլտնտեսությունների կազմակերպչական, տնտեսական և քաղաքական ամրացման խնդիրները։

Այս նպատակով պլենումն առաջարկում ե ՎՀ-ԲԳՏ-ների մարմիններին իրենց ուշադրությունը կենտրոնացնել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի պլենումի հետևյալ դիրեկտիվների կիրառումն ստուգելու ուղղությամբ.

1) Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում՝ հիմք ունենալով գործավարձը և կոլտնտեսության յեկամուտների բաշխումն ըստ աշխօրերի թվի և հաշվի առնելով աշխատանքի վորակը։ Ինչպես և կիրառվում աշխատանքի հաշվառումը և աշխօրերի գրանցումները հաշվեգրքույկներում։

2) Ամենակարճ ժամանակամիջոցում վե-

րացնել դիմազրկությունը տրակտորների և գյուղատնտեսական այլ ինվենտարների օգտագործման ասպարեզում, ապահովել կոլտնտեսական բրիգադների մշտական կազմ, ներկովի և տեխնիկական կուլտուրաների մեծ հողամասեր ունեցող կոլտնտեսություններում բրիգադներին ամրացնել բերքահավաքման առանձին մասերին, ինչպես նաև վերահսկողություն սահմանել ինվենտարի և մեքենայական ու կենդանի քարշող ուժի լիակատար օգտագործման վրա։

3) Բերքի հավաքման զուգընթաց, ստուգման յենթարկել աշնանացանի և աշնանահերկի նախապատրաստությունը։

4) Ստուգման յենթարկել վողջ կոնտրակտացված հացը սահմանված ժամկետներին պետությանը հանձնելու, ինչպես նաև կոլտնտեսականների ապրանքային հացը պետությանը վաճառելու գործը։

5) Ստեղծել տեսակավոր սերմֆոնդեր.

6) Կիրառել կոլտնտեսությունների յեկա-



մուտների բաշխումը ամենաուշը մինչև հունվարի 20-ը։

Կոլտնտեսական սեկտորի բերքահավաքման կամպանիայի ստուգումն ու անցկացումը չպիտի ՎՀ-ԲԳՏ-ների ուշադրությունը թուլացնեն անհատական սեկտորի բերքի հավաքումը ժամանակին կազմակերպելու խնդրի հանդեպ։ Ընդ վորում անհրաժեշտ է լայնորեն կազմակերպել անհատական տնտեսությունների լծասարքը։ Բերքահավաքի կամպանիան անհատական սեկտորում այնպես պետք է անցկացնել, վոր նա ավելի մեծ չափով ապահովի կոլեկտիվացման հետագա աճումը։

## Տեխնիկական կուլտուրաների բերքահավաքման գծով

Տեխնիկական կուլտուրաների առաջիկա բերքահավաքը հիմնականում կատարվելու յե ձեռքի աշխատանքով և ձիաքարշ ինվենտարի օգտագործման հիման վրա։ Ցանքի ընդարձակված տարածությունների պայմաններում դա պահանջում է հատուկ ու-

շադրություն դարձնել գյուղատնտեսության այս բնագավառին, որը հումույթ է ապահովում արդյունաբերության համար, և ՎՀ-ԲԳՏ-ի մարմինների վրա պարտականություն է դնում ստուգման յենթարկել հետևյալ միջոցառումների կիրառումը.

1) Խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների միջև պայմանագրեր կնքել տեխնիկական կուլտուրաներ մշակող խորհտնտեսությունների համար բանվորական ուժ հավաքագրելու մասին և ամբողջապես ու լրիվին կատարել այդ պայմանագրերը։

2) Փոխադարձ օգնություն կազմակերպել կոլտնտեսությունների միջև, ինչպես նաև խորհտնտեսությունների կողմից, թե բանվորական և թե քարշող ուժ ու ինվենտար հայթայթելու համար տեխնիկական կուլտուրաների բերքահավաքին։

3) Տեխնիկական կուլտուրաների բերքը հավաքել բացառապես գործավարձային սիստեմով թե կոլտնտեսություններում և թե խորհտնտեսություններում։

4) Կոնտրակտացիայի յենթարկված ապ-



րանքային արտադրանքը հանձնել պետության սահմանված ժամկետներին։

5) Վուշի և կանեփի նախնական մշակման գործարանների շինարարության ընթացքը և ժամանակին գործի գցելը։

6) Հանրապետական և յերկրային (մարզային) ՎՀ-ԲԳՏ ների կողմից մշտական հսկողություն սահմանել պարենը (հատկապես յուղը), քուսպը և արդյունաբերական ապրանքները տեխնիկական կուլտուրաների շրջանները փոխադրելու պլանների ժամանակին կատարման վրա։

## Կերի գծով

Ընթացիկ տարվա ամռան և աշնան ամիսներին կոլտնտեսություններում և հատկապես անասնապահական խորհտնտեսություններում պետք է ստեղծել կերի այնպիսի բազա, որ անհրաժեշտ ռեզերվով հանդերձ լրիվին ապահովի անասնաբուծության զարգացման ասպարեզում կուսակցության սահմանած ծրագիրը։

ՎՀ-ԲԳՏ-ների բոլոր մարմինները պար-

տավոր են բացառիկ ուշադրությամբ հետևվել, վորպեսզի ժամանակին կատարվեն հետևյալ միջոցառումները.

1) Կուսշրջկոմների և շրջգործկոմների կողմից օգնություն ցույց տրվի խորհտնտեսություններին՝ խոտհնձի և սիլոսային կամպանիաների համար քարշող և բանվորական ուժ ապահովելու գործում։

2) Ամբողջապես կատարվի թե առաջին և թե յերկրորդ խոտհնձի պլանը կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում։

3) Ժամանակին փորվեն սիլոսային հորերն ու խրամները և սիլոսային կուլտուրաներից բացի, առավելագույն չափով օգտագործվեն նաև վայրի խոտերը, բազուկի տերևները և չոր խոտը։

## Բանջարաբուծության գծով

ԿՎՀ-ի պլենումը պարտավորեցնում է ՎՀ-ԲԳՎ-ների բոլոր մարմիններին թույլ չտալ բանջարեղենի վոչ մի տոնն բերքի փչացում ու փտում և սպեցիալիզացիայի յենթարկված կոլտնտեսություններում,



խորհտնտեսություններում ու քաղաքամերձ բանջարանոցներում սիստեմատիկ ստուգման յենթարկել՝

1) Բանջարաբուծական կուլտուրաները խնամելու աշխատանքների կատարումը, մասնավորապես բանուժի և անհրաժեշտ ինվենտարի ապահովումը.

2) Տրանսպորտի համար անհրաժեշտ բանուժի, ինչպես նաև տեղերում բանջարաբուծական կուլտուրաների բերքի հավաքման համար շինքերի պատրաստությունը։

3) Բանջարեղենի նախնական մշակման միջոցառումները տեղերում—կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում։

4) Բանջարեղենի բերքի հավաքման տարայի ապահովումը։

5) Սպառկոոպերացիայի մերձքաղաքային բանջարանոցների, ինչպես նաև բանջարաբուծական խորհտնտեսությունների ամրացումը ձեռնարկություններին, բանկոոպներին ու փակ բաշխիչներին և բանվորական բնակչության համար սահմանված բանջարեղենի հավաքման, փոխադրման ու պահ-

պանման ուղղությամբ ձեռնարկությունների բանվորների հանձն առած պարտավորությունների իրական կատարումը։

## Պայքար կորուստների դեմ

ԿՎՀ-ի պլենումը պարտավորեցնում է ՎՀ-ԲԳՏ-ի բոլոր մարմիններին և նրանց ոժանդակող խմբերին զարկ տալ և ոժանդակել խորհտնտեսությունների բանվորների ու կոլտնտեսականների նախաձեռնությանը, վորը նրանք հանդես են բերում կորուստների վերացման համար հացահատիկային, բանջարաբուծական և տեխնիկական կուլտուրաների բերքահավաքի ժամանակ։

ՎՀ-ԲԳՏ-ների մարմինները պետք է ստուգեն, թե ինչ չափով են կիրառված բերքի հավաքման ժամանակ կորուստները նվազեցնելու կապակցությամբ կոլտնտեսականներին խրախուսելու մասին տրված դիրեկտիվները։



## Գյուղատնտեսական մեքենաշինության գործարանների աշխատանքը

Համ Կ (բ) Կ ԿՎՀ-ի պլենումը հանձնարարում է ԿՎՀ-ի նախագահությանը և ՎՀ-ԲԳՏ-ի բոլոր մարմիններին անմիջական վերահսկողություն սահմանել և ստուգել, թե ինչպես են Համ Կ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի նշած գործարանները ժամանակին կատարում վուշի ու կանեփի բերքահավաքման ինվենտարի և նախնական մշակման մեքենաների արտադրական ծրագրերը, ինչպես նաև այն, թե ինչպես են տնտեսական մարմիններն աջակցություն ցույց տալիս այդ գործարաններին՝ անհրաժեշտ հումույթ, կիսաֆաբրիկատներ և այլ նյութեր հայթայթելու համար։

Հիշյալ գործարանների արտադրական ծրագրերի կատարման ստուգումը պետք է տեղի ունենա յուրաքանչյուր գործարանում ՎՀ-ԲԳՏ-ի կողմից մշտապես աշխատող ոժանդակ խմբեր ստեղծելու հիմունքով։

## Քաղաքի ոգնությունը բանվորական ուժով, տրանսպորտով յեվ շենքերով

Բերքի հավաքման ապարբեզում ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի վորոշումների կենսագործումը պահանջում է, վոր քաղաքն ակտիվ ոգնություն ցույց տա գյուղին։ ՎՀ-ԲԳՏ-ի մարմինները պետք է այդ գծով ստուգման յենթարկեն հետեվյալ միջոցների կատարումը.

1) Բանջարաբուծական խորհտնտեսություններում գտնվող քաղաքամերձ տնտեսությունների բերքահավաքի ապահովումն անհրաժեշտ բանվորական ուժով, ինչպես նաև բանվորական ընտանիքների անդամների, ուսանողների և տնային տնտեսուհիների ներգրավումը։

2) Քաղաքային ավտոմոբիլային և սայլատարական փոխադրական միջոցների հատկացումը։

3) Պահեստների և այլ շենքերի պատրաստությունը քաղաքներում բանջարեղենի պահպանման համար։



## Կազմակերպչական միջոցառումներ

ԿՎՀ-ի պլենումը գտնում է, վոր ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի վորոշումների հիման վրա բերքահավաքման աշխատանքների պլանի կատարումը պահանջում է հետևյալ կազմակերպչական միջոցառումների կատարումը ՎՀ-ԲԳՏ-ների կողմից.

1) Հանրապետական և յերկրային (մարզային) ՎՀ-ԲԳՏ-ների վողջ ակտիվին, ինչպես նաև մամուլը և նրա հարվածային բանգյուղթղթակիցներին մասնակից դարձնել բերքի ժամանակին ու լրիվ հավաքումն ստուգելու աշխատանքին։

2) Շրջանային ՎՀ-ԲԳՏ-ների վողջ ակտիվին բերքահավաքի ժամանակ գործուղել բերքահավաքման ամենից ավելի կարևոր կետերը։

3) Յուրաքանչյուր կոլտնտեսությունում և խոշոր խորհտնտեսություններում կազմակերպել ԲԳՏ-ի ոժանդակող խմբեր, նրանց մեջ ներգրավելով հարվածային կոլտնտեսականներին և խորհտնտեսությունների հարվածային բանվորներին։

4) ԲԳՏ-ների ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը կազմակերպել կոլտնտեսությունների աշխատանքի նկատմամբ, յատկապես աշխատանքի կազմակերպման ու նորմավորման, բանվորական ուժի ճիշտ օգտագործման, արտադրության կազմակերպման, կոլտնտեսությունների տնտեսության ղեկավարության բարելավման ու եժանացման հարցերի շուրջը։

5) Շրջանային ՎՀ-ԲԳՏ-ների աջակցությունը կազմակերպել կոլտնտեսական հանձնաժողովների աշխատանքի նկատմամբ ըստ տնտեսության առանձին ճյուղերի, նրանց ակտիվ մասնակից դարձնելով աշխատանքի կարգավորման ու նորմավորման գործին. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում շրջկոլտնտմիություններին կից կոլտնտեսությունների ներկայացուցիչների շրջանային խորհրդակցություններ հրավիրել աշխատանքի նորմավորման հարցերի շուրջը, նորմավորումը կարգավորելու և այնտեղ նկատվող խայտաբղետությանը վերջ տալու համար։



6) Կոլտնտեսությունների աշխատանքի հաշվառումը կարգավորելու նպատակով մոբիլիզացիայի յենթարկել հանրապետական, յերկրային (մարզային) և շրջանային կազմակերպություններում աշխատող անհրաժեշտ քանակությամբ հաշվային աշխատակիցների։

## II. Յերկաթուղային տրանսպորտ

Յերկաթուղային տրանսպորտի առթիվ Համ Կ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի առաջադրած խնդիրներին համապատասխան, ՎՀ ԲԳՏ-ի մարմինների աշխատանքը մոտակա ժամանակամիջոցում պետք է կենտրոնացվի ԿԿ-ին հունիսյան պլենումի հետեվյալ հիմնական վորոշումների կատարումն ստուգելու ուղղությամբ.

## Յերկաթուղային տրանսպորտի վերակառուցումը

1) I և II կարգի գծերի (դոնբասից մեկնող գծերի, Ուրալ-Կուզբասյան կոմբինատի հետ կապված գծերի, Տաշկենտի ուղղու-

թյան գծերի) վերակառուցման աշխատանքների նախապատրաստությունն ու կատարումը, այնպիսի հաշվով, վորպեսզի նրանց վերակառուցումն ավարտվի 1932—33 թ.։

2) Քարշի սարքավորման վերակառուցման աշխատանքների իրագործումը 1931-32 թ. ուժեղ շոգեկառքեր, ջերմատարներ և ելեքտրատարներ մտցնելու կապակցությամբ (դեպոների զարգացումն ու վերակազմությունը, սարքավորման ուժեղացումը, հանդերձանքի աշխատանքների մեքենայացումը, տրակտի ճանապարհների զարգացումը և այլն)։

3) Տրանսպորտի վերակառուցման հետևանքով պահանջվելիք կադրերի պատրաստությունը 1932 թ. (քարշի սպասավորներ, եքսպլոատացիոն աշխատավորներ, ելեկտրիկներ և այլն)։

4) 1931 և 1932 թ.թ. իրագործել տրանսպորտի վերակազմության պահանջներից բղխող նոր արտադրությունների կազմակերպման աշխատանքները (ուժեղ շոգեկառքերի, ջերմատարների, վագոնների, ելեքտ-



րատարների և այլ սարքավորումների շինարարությունը)։

## Պատրաստել տրանսպորտը աշնանա-ձմեռային փոխադրումների համար

Յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի զգալի ավելացումը աշնան և ձմռան շրջանում, պահանջում է լրիվ կատարել շոգեկառքերի և վագոնների պարկերի առողջացման, ցանցի բեռնատարական ունակության ուժեղացման, աշնանա-ձմեռային փոխադրումների նախորյակին ջրամատակարարման ուժեղացման և փոխադրական միջոցների ոգտագործման վճռական բարելավման 1931 թ. պլանով նշված աշխատանքները։

Պլենումը հավանություն է տալիս ԿՎՀ-ԲԳՏ-ի նախագահության այն վորոշմանը, վորը պահանջում եր հուլիս ամսում անմիջապես ԿՎՀ-ԲԳՏ-ի միջոցով ստուգման յենթարկել կարեվորագույն գծերի (Հարավային, Հարավ-Արեվելյան, Սամարա-Զլատոուստովյան) նախապատրաստությունն

աշնանա-ձմեռնային փոխադրումների համար։ Պլենումը պարտավորեցնում է հանրապետական, յերկրային և մարզային ՎՀ-ԲԳՏ-ներին նույնպես ստուգումներ անցկացնել մնացած գծերում և ամենաուշը մինչև օգոստոսի 10-15-ը ստուգման արդյունքների մասին զեկուցել ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին, յերկրային և մարզային կուսկոմիտեներին։

Ստուգումը պետք է ընդգրկի հետևյալ կարևոր միջոցառումների կատարումը.

1) Շոգեկառքերի պարկի առողջացումը հատուկ վերանորոգման միջոցով, շրջանում ու դեպոների կառուցման և բացման աշխատանքների ավարտումը, սպասարկման յերկար թևերի և յենթահերթային կետերի վերացումը։

2) Զուգակցված յերթի ամրացումը և դիմազրկության վերջնական վերացումը, շոգեկառքերը թե գծի ներսում և թե տարբեր գծերի միջև վերագործուղելու կապակցությամբ՝ կուսբրիգադների ամրացումը շոգեկառքերին, հուլիս-օգոստոս ամիսների



ընթացքում կարևորագույն գծերում (Դոնբասի, Ուրալի, Սիբիրի, Միջին Ասիայի) շոգեկառքերի և վագոնների ռեզերվ ստեղծելը հանդիպական փոխադրումների և շարժական կազմի վոչռացիոնալ օգտագործման դեմ վճռական պայքար կազմակերպելը։

3) Ջրամատակարարման և բեռնատարական ունակության ուժեղացման աշխատանքների ավարտումը աշնանա-ձմեռնային փոխադրումների նախօրյակին։

4) Շոգեկառքերի պարկի այժմեյականացման ծրագրի կատարումը (որոլվող կրակարաններ, կամարներ, շոգեջեռուցում, ջեռուցիչներ ևայլն)։

5) Պատրաստի կադրերով ապահովված լինելու չափը (կուսբրիգադներ, դիսպետչերներ, դեպոյի վորակյալ բանուժ)։

## Տնտեսական հաշվարկ

ՎՀ—ԲԳՏ-ները հատուկ ուշադրություն պետք է նվիրեն ստուգելու յերկաթուղային շահագործման շրջանների և յերկաթուղային տրանսպորտի ստորին տնտեսական ո-

ղակների (գործարանների, դեպոների, կայարանների, դիստանցիաների և այլն) իսկական փոխադրումը տնտեսական հաշվարկի 1931 թ. յերկրորդ կիսամյակում, ինչպես նաև ստուգելու միանձնյա սիստեմի իրական կիրառումը տրանսպորտի վարչության բոլոր ողակներում։

## Ստուգման կազմակերպումը

ՎՀ—ԲԳՏ-ի մարմիններն յերկաթուղային տրանսպորտի մասին Համ Կ (բ) Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի ընդունած վորոշումներից բղխող խնդիրները բավարար հաջողությամբ կկարողանան իրագործել միայն այն պայմանով, յեթե ստուգման համար մոբիլիզացիայի յենթարկեն բանվորական լայն մասսաներին, կուսակցական, արհմիութենական և կոմյերիտական կազմակերպություններին, ինժեներ-տեխնիկական և բանվորական հասարակայնությունը։

Մասսայական ստուգում կազմակերպելու համար առաջին հերթին անհրաժեշտ է՝

ա) ստուգման աշխատանքի համար ոգ-



տագործել ՎՀ—ԲԳՏ-ների մարմիններին կից ստեղծված արտահաստիքային տեսչություններին.

բ) կուսակցական, արհմիութենական և բանվորական ակտիվից ու հարվածայիններից կազմակերպել փոխադարձ հսկողության հարվածային բրիգադներ՝ ՎՀ—ԲԳՏ-ների ղեկավարությամբ ստուգելու համար աշխատանքի առանձին բնագավառները.

գ) ստեղծել հարվածայիններից բաղկացած բանվորական ու կոմյերիտական բրիգադներ և ԲԳՏ-ի ոժանդակող խմբեր, ինչպես նաև ԲԳՏ-ի բրիգադներ՝ մամուլի հարվածայինների հետ միասին. այս բրիգադները ստուգումն անց են կացնում իրենց բնագավառի, գործարանի, արհեստանոցի սահմաններում. ՎՀ—ԲԳՏ-ների տեղական մարմինները պարտավոր են ոգնություն ցույց տալ այդ բրիգադներին՝ ծրագիր ու հետազոտության կարգ մշակելիս, և հրահանգներ տան նրանց.

դ) ԲԳՏ-ի ոժանդակ խմբեր և ստուգող բրիգադներ կազմակերպել արդյունաբերա-

կան այն գործարաններում, վորոնք կատարում են տրանսպորտի պատվերները, այն է՝ ռելսեր, շարժական կազմ, պահեստի մասեր, չուգունե ջրաբաշխական խողովակներ և ջրամատակարարման սարքավորումներ են մատակարարում։

Հանրապետական, յերկրային և մարզային ՎՀ—ԲԳՏ-ները հատուկ վերահսկողության տակ պետք է վերցնեն այս գործարանների աշխատանքը և միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի տրանսպորտի պատվերները կատարվեն հարվածային շինարարությունների պատվերներին համահավասար։

Համ Կ(բ)Կ ԿՎՀ-ի պլենումը հանձնարարում է ՎՀ—ԲԳՏ-ների բոլոր մարմիններին ե՛լ ավելի յեռանդուն պայքար սկսել յերկաթուղային տրանսպորտի ապարատում բույն դրած բյուրոկրատիզմի, քարացածության ու ծանրաշարժության դեմ, ձըգտելով ամենակարճ ժամանակամիջոցում վերակառուցելու յերկաթուղային տրանսպորտի բոլոր տնտեսական մարմինների աշխատանքը, հիմք ունենալով ընկ. Ստալինի



ցուցմունքները տնտեսական շինարարության նոր խնդիրների մասին՝ նոր պայմանների կապակցությամբ։

Կուսակցության բոլոր վերահսկիչ մարմինները պետք է վճռաբար պայքարեն ոպորտունիզմի ամեն մի դրսևորման դեմ յերկաթուղային շինարարության պրակտիկայում, հատկապես ինքնահոսին ապավինելու, բյուրոկրատիզմի, քարացածության, աշխատանքի դանդաղ տեմպերի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցույց տալու դեմ։

## III. Քաղաքային տնտեսություն

Յելնելով արդյունաբերական շինարարության տեմպերից ու պլաններից և բանվոր դասակարգի նյութական-կենցաղային ու կուլտուրական պայմանների բարելավման անհրաժեշտությունից, ՀԱմ Կ(բ)Կ ԿՎՀ-ի պլենումը ՎՀ—ԲԳՏ-ների մարմիններին առաջադրում է հետևյալ կարևորագույն խնդիրները ԽՍՀՄ-ի քաղաքային տնտեսության զարգացման և հատկապես բնակա-

րանային շինարարության տեմպերի արագացման ապահովում.

1. ՎՀ—ԲԳՏ-ները պետք է անմիջական վերահսկողություն սահմանեն բնակարանային շինարարության կատարման և առաջին հերթին ածխի շրջանների ստանդարտ շինարարության այս տարվա ծրագրի կատարման նկատմամբ: Դրա համար անհրաժեշտ է սիստեմատիկ կերպով ստուգել՝

ա) ինչպես են կատարվում բնակարանային շինարարությունը բանվորական ուժ, նյութեղեն ու ֆինանսական միջոցներ հայթայթելու պլանները և ինչպիսի բեռնավորմամբ են աշխատում շինմեխանիզմները.

բ) ինչպես է կիրառված այն դիրեկտիվը, որը պահանջում էր դեֆիցիտային շինանյութերը փոխարինել նոր, տեղական, ոչ-դեֆիցիտային շինանյութերով. այդ նյութերի արտադրության կազմակերպումը տեղում.

գ) ինչպես է իրագործված այն դիրեկ-



տիվը, որի համաձայն առաջին հերթին պետք է ավարտվեյին անցյալ տարիներից շարունակվող շինարարությունները. ինչպես է կատարված տների վերանորոգման պլանը.

դ) ինչպես են կատարված շինաշխատանքների որակական ցուցանիշները, առաջին հերթին ինքնարժեքի իջեցման ուղղությամբ:

ե) ճիշտ սահմանված ժամկետին և սահմանված ծավալով կատարված է արդյոք փայտե ստանդարտ տների հավաքման ու շահագործման ծրագիրը, համաձայն այն պլանի, որը սահմանել էր ՆԿ-ը մարտի 25-ին ածխարդյունաբերական շրջանների համար, ինչպես նաև կատարված է տեղական շինանյութերից թեթև տիպի կոնստրուկցիաների բնակշինարարության ծրագիրը.

զ) ստանդարտ բնակշինարարության հետագա ընդարձակումը.

է) մշտական վերահսկողություն սահմանել շինարարական կազմակերպություն-

ների աշխատանքի նկատմամբ՝ ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի և ճիշտ օգտագործման խնդրում։

2. 1932 թ. կոնտրոլ թվերը կազմելիս տեղական վերահսկիչ հանձնաժողովները պետք է միջոցներ ձեռք առնեն ապահովելու կոմունալ տնտեսության ասպարեզում ԿԿ-ի ընդունած վորոշումների կատարումը։

3. Համ Կ(բ)Կ ԿՎՀ-ի պլենումն առաջարկում է տեղական ՎՀ—ԲԳՏ-ներին մոտակա յեռամսյակում ստուգել, թե ինչպես են կատարված քաղաքային տնտեսության գծով Համ Կ(բ)Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի ընդունած այն վորոշումները, վորոնք պահանջում եյին՝

ա) ապակենտրոնացնել և փոքրացնել բնակարանային ֆոնդի ղեկավարությունը, բնակարանային տնտեսության կառավարման գործում ապահովելով տներում բնակվող բանվորների և ծառայողների առավելագույն մասնակցությունը.

բ) կոմունալ տնտեսություններն ու տները փոխադրել տնտեսական հաշվարկի և



քաղաքային տնտեսության գծով ներքին ռեսուրսների մոբիլիզացիա անցկացնել.

գ) քաղաքները մաքրել կեղտից ու աղբից, կարգի բերել սալահատակներն ու մայթերը, ինչպես նաև ընդարձակել կանաչ տունկերի տարածությունները.

դ) բարելավել ջրամատակարարումն ու փողոցների լուսավորությունը և ընդարձակել քաղաքային տրանսպորտը։

4. Պլենումը հանձնարարում է ԿՎՀ-ի նախագահությանը ստուգել, թե ինչքան են ժամանակին կատարվում ԿԿ-ի այն վորոշումները։ վորոնք պահանջում եյին անհրաժեշտ միջոցներով, սարքավորմամբ և նյութեղենով ապահովել ինչպես բնակարանային շինարարությունը, այնպես էլ տեպլոֆիկացիայի, տրանսպորտի վերակառուցման, ջրամատակարարման և կոոպերացիայի աշխատանքները, մասնավորապես՝

ա) ինչպես են Պետպլանը, ԺՏԳԽ-ը, Ֆինժողկոմատը և Ջրային Տնտեսության Ժողկոմատը կատարում ԿԿ-ի հունիսյան պլ-



№ 4554—3

լենումի դիրեկտիվները Մոսկվայի քաղաքային տնտեսության ասպարեզում։

5. ԿԿՀ-ի պլենումը հանձնարարում է Նախագահությանը ամենաուշը մինչև հոկտեմբեր ամիսը լսել Մոսկվայի քաղաքային ՎՀ—ԲԴՏ-ի զեկուցումը Մոսկվայի քաղաքային տնտեսության ասպարեզում ԿԿ-ի պլենումի վորոշումների իրացման ուղղությամբ նրա կատարած ստուգողական աշխատանքների մասին, ինչպես նաև համապատասխան երկրային (մարզային) ՎՀ-ների միջոցով իր հսկողության տակ, վերցնել նոր խոշորագույն արդյունաբերական կենտրոնների շինարարությունը։

## ՎՀ-ների կուսկոլեգիաների աշխատանքի մասին

(Ընդունված ընկ. Յեմ. Յարոսլավսկու զեկուցման առթիվ)

1. ԿՎՀ-ի պլենումը հավանություն է տալիս կուսկոլեգիաների քարտուղարների ապրիլյան համամիութենական խորհրդակցության այն վորոշմանը, վորը վերաբերում



եր ՎՀ-ների կուսկոլեգիաների աշխատանքին և վորը հաստատվեց ԿՎՀ ի Նախագահության կողմից, և առաջարկում է ՎՀ-ների բոլոր մարմիններին իրենց աշխատանքի ընթացքում առաջնորդվել այդ վորոշումով, ընդ վորում ԿՎՀ-ի պլենումը հատկապես ընդգծում է այն հանգամանքը, վոր անհրաժեշտ է վճռաբար վերակառուցել ՎՀ-ների կուսկոլեգիայի աշխատանքը, նրանց ուշադրությունն ուժեղացնելով այն խնդիրների ուղղությամբ, վորոնք առաջադրվեցին ԿԿ-ի հունիսյան պլենումի կողմից և տնտեսավարների խորհրդակցությունում ընկ. Ստալինի արտասանած ճառում, այդ խնդիրներն առանցք դարձնելով մոտակա շրջանի իրենց աշխատանքի համար։

2. Այս վերակառուցումը պետք է ընթանա այնպիսի ուղղությամբ, վոր կուսկոլեգիաներն իրենց վորոշումների մեջ նկատի ունենան, վոր միայն դատախազական խնդիրներն այս կամ այն կուսանդամի նկատմամբ, վորի գործը քննվում է վերահսկիչ հանձնաժողովում, կամ հակակուսակ-

ցական արարքի համար նրան պատժելու խնդիրները, այլ և այն, որ նրանք չերևվան հանեն, ուսումնասիրեն և վերացնեն այն պատճառները, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում, որպեսզի առանձին կուսանդամները կամ կուսանդամների խմբերը կուսակցության շահերի համար վնասակար արարքներ գործեն։

Որոշումներ հանելիս՝ կուսկոլեգիաները պետք է ղեկավարվեն այն բանով, թե այս կամ այն կուսանդամն ինչ աստիճանի մասնակցություն ունի սոցիալիստական շինարարությանը, հարվածայնությանը և սոցիալիստական մրցման զանազան ձևերին, իրենց որոշումների միջոցով ապահովելով կուսակցության բոլոր անդամների առավել ակտիվ մասնակցությունը սոցիալիստական արշավին։

3. Արձանագրելով կուսակցության զգալի ամրացումն ու վիթխարի աճումը (2258 հազար անդամ առ 1-ն ապրիլի) և նրա սոցիալական կազմի բարելավումը՝ բոլոր ոպոզիցիոն հոսանքների ու խմբավորում-



ների դեմ կուսակցության գլխավոր գծի համար մղված վճռական ու անշեղ պայքարի հետևանքով, ԿՎՀ-ի պլենումն ուշադրություն է հրավիրում պայքարի այն ձևերի վրա, որոնցով ամեն գույնի ոպորտունիստները ճգնում են թերահավատություն սերմանել սոցիալիստական շինարարության ասպարեզում կուսակցության ուրվագծած պլանների ռեալ լինելու խնդրի հանդեպ, խախտել այն հավատքը, որ գոյություն ունի կուսակցության գծի ճշտության նըկատմամբ։

Աջ ոպորտունիզմը, որը մերկացվեց իբրև կուլակային իդեոլոգիա, իբրև կուլակային ագենտուրա մնում է որպես գլխավոր վտանգ տվյալ շրջանում, ավելի ու ավելի զուգակցվելով սոցիալիստական շինարարության ասպարեզում կուսակցության վերցրած տեմպերի «վոչ-ռեալ» լինելու տրոցկիստական տեսությունների։ Նա գործնականում արտահայտվում է նրանով, որ պասիվություն է ցույց տալիս բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարում, դան-

ղաղում է կամ չի կամենում աշխատանքը վերակառուցել նոր ձևերով, ուղղակի անտեսում է դասակարգային պայքարի առանձնահատուկ ձևերը տվյալ շրջանում, չեն կամենում պայքարել կուլակների խցկըման դեմ կոլտնտեսություններում, չի պայքարում շինարարության բոլշևիկյան տեմպերի և կարևորագույն տնտեսական կամպանիաների կիրառման համար և այլն: Միևնույն ժամանակ, վերահսկիչ հանձնաժողովները պետք է վճռական հակահարված տան կուսակցության գծի ամեն տեսակ «ձախ» օպորտունիստական խեղաթյուրումներին, վորոնք անտեսում են կուսակցության լոզունգը կոլեկտիվացման կամավորության մասին, այդ ասպարիզում կուսակցության տված առաջադրանքները փոխարինում են քմահաճ «կոնտրոլ թվերով» վորպիսիք ընդունակ են վիժեցնելու ձեռք բերված հաջողությունները, քարոզում են մանր-բուրժուական «հավասարացումը» վորպես կոմունիզմի բարձրագույն սկզբունք, և



գործնականում գլորվում են դեպի տրոցկիստական դիրքավորումները:

4. Վերահսկիչ հանձնաժողովները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն ընտրելու այնպիսի ակտիվ, վորը վերահսկիչ հանձնաժողովներին ոժանդակություն ցույց տա կուսակցական կազմակերպության կյանքն ու նրա թերությունների ուսումնասիրելու և այդ թերությունները վերացնելու աշխատանքում, հիշելով, վոր վերահսկիչ հանձնաժողովները կկարողանան կատարել իրենց խնդիրները:

## Կուս կոլեգիաների աշխատանքի խընդիրների յեվ մեթոդների մասին

Համ Կ(բ)Կ ԿԿ,Հ-ի նախագահության յեվ ԽՍՀՄ-ի ԲԳՏ ժողկոմատի կոլեգիայի միացյալ նիստի բանաձևը

(Ընդունված ընկ. Յեմ. Յարոսլավսկու զեկուցման առթիվ 1931 թ. մայիսի 13-ին)

1. Հետևողականորեն ու հաստատապես կիրառելով գլխավոր գիծը, վճռաբար պայ-

քարելով ընդդեմ օպորտունիստական թեքումների, ընդդեմ հակահեղափոխական տրոցկիզմի և տվյալ շրջանի գլխավոր վտանգ աջ թեքման, կուսակցությունը սոցիալիստական շինարարության գործում ձեռք բերեց վճռական այնպիսի հաջողություններ, որոնք հնարավորություն տվին, որպեսզի մեր երկիրը թևակոխի սոցիալիզմի շրջանը, և որոնք ապահովում են սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի ավարտումը հնգամյակի երրորդ տարում։

Կուսակցության զտումը և վերահսկիչ հանձնաժողովների ամենօրյա աշխատանքը նպաստեցին կուսակցության ձեռք բերած հաջողությունների ապահովմանը, գաղափարական միաձուլության աճմանը, պատասխանատվության զգացմունքի բարձրացմանը, կուսդիսցիպլինայի ամրացմանը, նրա շարքերի առողջացմանն ու ամրապնդմանը։ Այդ մասին են վկայում կուսկոլեգիաների աշխատանքի պրակտիկայի այն բազմաթիվ տվյալները, որոնք վերաբերում են տատանումների մեջ ընկած կուսանդամների



թվի նվազմանը, պաշտոնական դիրքերի օգտագործման հետ կապված հանցանքների, կաշառակերության, զեղծարարությունների, հարբեցողության, կրոնական ծիսակատարություններին հետևելու և այլ արարքների թվի նվազացմանը։ Այս հաջողությունները ձեռք են բերված շնորհիվ ներկուսակցական ծավալուն դեմոկրատիայի և ինքնաքննադատության, շնորհիվ այն հանգամանքի, որ մասսաները ներգրավվեցին մեր տնտեսական, կոոպերատիվ, արհմիութենական և այլ կազմակերպությունների գործունեությանը վերահսկելու աշխատանքներին։

2. Արձանագրելով, որ ՎՀ-ները հիմնականում ճիշտ մոտեցում են ունեցել ինչպես համակուսակցական և քաղաքական բնույթ ունեցող գործերի, այնպես էլ զանազան հանցանքների համար դատապարտված կուսանդամների անձնական գործերի քննությանը, ԿՎՀ-ն գտնում է, որ այդ գործերի քննության խնդրում կան մի շարք թերություններ.

ա) ՎՀ-ները բավականաչափ խնամքոտ ու հոտառու մոտեցում չունեն առանձին սոցիալական խմբերի, առաջին հերթին բանվորների և հատկապես թոշակառուների նկատմամբ. այդ մասին վկայում է այն հանգամանքը, վոր դեռևս բարձր տոկոս (մինչև 56) են կազմում այն դեպքերը, յերբ վերացվում են բանվորների վտարման մասին ստորադաս ՎՀ-ների հանած վորոշումները։

բ) Բավականաչափ ուշադիր ու խնամքոտ մոտեցում գոյություն չունի կուսանդամների այնպիսի կատեգորիաների նկատմամբ, ինչպիսին են տնտեսավարները, յերիտասարդ մասնագետները, կոլտնտեսականները, 25-հազարականները.

գ) Հապճեպ են լուծվում այնպիսի գործերը, վորոնք փաստերի նախնական և հոգածու ստուգում են պահանջում, հատկապես այն դեպքում, յերբ չարախոսություններ ու զրպարտիչ հարձակումներ են լինում, հաճախ դասակարգայնորեն խորթ տարրերի կողմից։

դ) Մի շարք դեպքերում վոչ-քննադատական, վոչ—հոտառու վերաբերմունք է ցույց



տրվում դատի տակ ընկած և դատարանի կողմից դատապարտված կուսանդամների գործերի քննությանը։

յե) Դանդաղ է քննվում գործերը, յերբեմն էլ քաշքշուկի տարրեր են յերևան գալիս.

զ) Կուսդաստիարակչական բնույթի միջոցառումների և բանավոր ընկերական ներգործության հաշվին կիրառվում են խիստ տույժեր, կուսկոլեգիաների աշխատանքում բավականաչափ չեն արտացոլվում կուսակցության 13-րդ համագումարի ցուցմունքները («վերահսկիչ հանձնաժողովների աշխատանքի մասին» բանաձևի 4-րդ կետ) կուսանդամների նկատմամբ ունենալիք մոտեցման մասին նրանց հանցանքների քննության ժամանակ։

3. Բացի այդ, կուսկոլեգիայի աշխատանքում կան մի շարք էական թերություններ, վորոնք կարճ ժամանակում պետք է վերացվեն։

ա) Զգալի տեղ է գրավում կուսհանցանքների վերաբերյալ առանձին գործերը, յերբ

բավականաչափ չեն ուսումնասիրված այս հիվանդագին երևույթների ընդհանուր պատճառները, այդպիսին կանխելու և վերացնելու համար։

բ) Քիչ ուշադրություն է դարձվում ստուգելու, թե առանձին կուսակցությունները և կոմունիստները ինչպես են կատարում կուսակցության դիրեկտիվները արդֆինպլանների կատարման, սոցմրցման, հարվածայնության, կոլտնտեսական շինարարության ու տնտեսական-քաղաքական կամպանիաների անցկացման մասնակցելու մասին։

գ) Բավարար չափով չի զարգացած կուսկոլեկտիվների մասսայական կուսդաստիարակչական աշխատանքը և կուսակցական մասսաների մասնակցությունը կուսկոլեգիաների աշխատանքին։

դ) Անբավարար չափով և հաճախ ոչ ժամանակին է հակազդեցություն ցույց տրվում ինքնաքննադատության ճնշման փաստերի հանդեպ։

ե) Մամուլում թույլ է լուսաբանվում



կազմակերպության մեջ գոյություն ունեցող հիվանդագին երևույթների դեմ պայքարելու աշխատանքը։

զ) Անուշադիր վերաբերմունք է ցույց տրվում բանգյուղթղթակիցների թղթակցություններին այս կամ այն մարմնի աշխատանքների վերաբերյալ, արագ ընթացք չի տրվում այդ թղթակցություններին, հատկապես մամուլի ստորին օրգանների նկատմամբ (պատի թերթեր, գործարանային և կոլտնտեսական բազմատիրաժ թերթեր), և գրեթե ամբողջապես բացակայում է պայքարը բանգյուղթղթակիցների հալածանքների դեմ։

4. Մի շարք շրջաններում անճիշտ փոխհարաբերություններ գոյություն ունեն շրջանի կուսկոմիտեների և շրջանի վերահսկիչ հանձնաժողովների միջև, որպիսին արտահայտվում է այն բանով, որ տվյալ կուսշրջկոմները թերագնահատում են ՎՀ-ների դերն ու խնդիրները շրջանում, ինչպես նաև այն, որ լինում են դեպքեր, երբ

շրջանային ՎՀ-ները փոխարինում են կուսկոմիտեների աշխատանքը։

5. Յերկրային (մարզային) ՎՀ-ների աշխատանքի կարգապահության թերություններից մեկն է հանդիսանում այն, որ նրանք թերահաշվառում են շրջանային ՎՀ-ների աշխատանքը և թույլ են կենդանի ղեկավարություն ու աջակցություն ցույց տալիս նրանց։

6. Անբավարար չափով է գործնական աջակցություն ցույց տրվում, յերբեմն էլ այդպիսին բոլորովին բացակայում է, կոմյերիտմիության կոնֆլիկտային հանձնաժողովների նկատմամբ կոմյերիտականներին վերաբերվող գործերի ճիշտ քննություն կազմակերպելու, Համ ԼԿՅԵՄ-ի շարքերում գոյություն ունեցող հիվանդագին յերևույթներն ուսումնասիրելու և նրանց դեմ պայքարելու գործում։

7. Ձևական վերաբերմունք է ցույց տրվում ՎՀ-ները դիվիզիաների կուսհանձնաժողովների հետ կապելու գործին. ՎՀ-ները թույլ են աջակցում կարմիր բանակի կուս-



սակցականների մեջ գոյություն ունեցող հիվանդագին յերևույթների ուսումնասիրության աշխատանքին։

## II

1. Յելնելով կուսակցության առաջադրած խնդիրներից, ԿՎՀ-ն գտնում է, որ կուսկոլեգիաներն իրենց ամբողջ աշխատանքը պետք է դարձնեն սոցիալիստական արշավի նպատակներին, այն հաշվով, որ «հետագայում ևս ապահովեն սոցիալիստական շինարարության մարտական տեմպերը», «պահպանվի կուսակցության շարքերի լենինյան միասնությունը, ել ավելի ուժեղացվի պայքարը օպորտունիզմի բոլոր տեսակների ու նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ, հատկապես աջ թեքման դեմ, անխնա ջախջախելով այն փորձերը, որոնք նպատակ ունեն խախտելու կուսակցական յերկաթյա դիսցիպլինան», և «ապահովվի բոլշևիկյան ինքնաքննադատության հետագա ավելի խիզախ ծավալումը» (Համ Կ (բ) Կ 16-րդ համագումար)։

Այս նպատակով անհրաժեշտ է վերակառուցել Համ Կ ( ) Կ ՎՀ-ների աշխատանքը․ այդ վերակառուցումը հնարավորություն պետք է տա ուժեղացնելու այն պայքարը, որը մղվում է կուսակցության գաղափարական միաձուլվածությունն եվ ավելի բարձրացնելու, կուսակցության բոլոր անդամների աշխատանքի եվ ավելի բարձր որակ ու տեմպեր հաղորդելու, ամենաբարձր դիսցիպլինա դաստիարակելու, կուսակցության առաջին իսկ կոչին կուսանդամի վրա դրված յուրաքանչյուր աշխատանքի կատարման պատրաստականություն զարգացնելու և կուսակցության ու կառավարության որոշումները ճշտիվ կատարելու համար։

Դրա հետ միասին, այս վերակառուցումը պետք է ընթանա ՎՀ-ների աշխատանքը ձեռնարկության ու կոլտնտեսության հետ ավելի ու ավելի մոտեցնելու. շարքային կուսակցականներին հետզհետե ավելի ու ավելի ՎՀ-ների աշխատանքին մասնակից դարձնելու գծով։



Աշխատանքի վերակառուցման տարրերից մեկը պետք է հանդիսանա կուսակցականների աշխատանքի առավելագույն պարզացումը։

2. ԿՎՀ-ն անհրաժեշտ է համարում ուժեղացնել պայքարը թե տեսականում և թե գործնականում յերևան յեկող աջ օպորտունիզմի դրսևորումների, տրոցկիզմի ամենափոքր ռեցիդիվների, կուսակցական որոշումների կիրառման ընթացքում հանդես յեկող «ձախ» խոտորումների, յերկերեսանիության և այդ յերևույթների նկատմամբ հաշտվողականության դեմ։

3. Կուսակցական կազմակերպությանը դաստիարակելով այս պայքարի բովում, անհրաժեշտ է վճռական պայքար մղել նաև այդ պայքարը գռեհկացնելու, անհիմն կերպով թեքման «յարլիկ կպցնելու» դեմ, որպիսիք նկատվում են մի շարք դեպքերում, յերբ գործնականում կուսակցության գլխավոր գիծը կիրառողը առանձին կուսանդամների, յերբեմն բանվոր ու կոլտնտեսական կուսանդամի այս կամ այն հանցանքը՝ պա-

տահական սխալը, ցիլուլթների ժամանակ գործած անհաշտ արտահայտությունը արհեստականորեն հակակուսակցական թեքման հասկացողության տակ են դնում, որը քողարկում և դժվարացնում է իրական պայքարը բուն օպորտունիզմի դեմ։

4. Միաժամանակ ՎԿ-ները չպետք է թուլացնեն պայքարը կուսակցության վարկաբեկող բարոյական-կենցաղային քայքայման փաստերի դեմ, պետք է ավելի սուր աչալրջություն դաստիարակեն դասակարգային թշնամու (վնասարարի, կուլակի), ինչպես նաև խորհրդային ապարատի ամենատեսակ բյուրոկրատական խեղաթյուրումների և կուսակցական ապարատում եղող բյուրոկրատացած տարրերի նկատմամբ, ամենայն հետևողականությամբ կատարելով 16-րդ համագումարի այն ցուցմունքը, որը պահանջում էր «ուշադրությամբ հետևել ինքնաքննադատության ճնշման փաստերին, մեղավորներին ամենախիստ տույժերի ենթարկելով»։

Վերահսկիչ հանձնաժողովները, անշեղ



պայքարելով երկերեսանիների և կուսակցությանը խաբող օպոզիցիոներների դեմ, պետք է նկատի ունենան, որ «ամեն գույնի օպորտունիստները, հատկապես աջերը, նոր մանևր են կիրառում, որն արտահայտվում է այն բանում, որ նրանք ձևականորեն խոստովանում են իրենց սխալները և ձևականորեն համաձայնվում են կուսակցության գլխավոր գծի հետ, իրենց այդ խոստովանությունը չհաստատելով գործով և կուսակցության գլխավոր գծի համար պայքարելով, որպիսին գործնականում նշանակում է այն, որ նրանք կուսակցության դեմ ուղղված բացահայտ պայքարից անցնում են թաքուն պայքարի, կամ սպասում են ավելի բարենպաստ պահի՝ իրենց հարձակումը կուսակցության դեմ վերսկսելու համար»։ Ուստի ՎԿ-ները պետք է «պահանջեն, որպեսզի բոլոր իրենց սխալները խոստովանողները կուսակցության գծի ակտիվ պաշտպանությամբ ապացուցեն իրենց խոստովանության անկեղծությունը» (16-րդ կուսհամագումար)։

6. Այն նախկին տրոցկիստների նկատմամբ, վորոնք այսօր միայն XV կուսհամագումարից ավելի քան յերեք տարի անցնելուց հետո, հայտարարում են իրենց կապերը տրոցկիստների հետ կտրած լինելու մասին, պետք է սահմանել, իբրև կանոն, վոր նրանց վերադարձը կուսակցության մեջ հնարավոր է միմիայն ընդհանուր կարգով իբրև համԿ (բ) Կ-ի շարքերը նոր մտնողների, և բացառիկ դեպքերում միայն բանվորական բջիջի և ստորին կուսկազմակերպության յերաշխավորությամբ, նրանք կարող են ՎՀ-ի վորոշմամբ կուսակցության մեջ վերականգնվել, առանց բջիջում թեկնածուական ստաժ անցկացնելու։

7. Մարզային (յերկրային) և հանրապետական ՎՀ-ների աշխատանքը պետք է ընթանա շրջանային ՎՀ-ների աշխատանքի նկատմամբ ավելի կոնկրետ ղեկավարություն կազմակերպելու, նրանց հրահանգավորելու, գործնական աջակցություն ցույց տալու, առանձին շրջանների եկոնոմիկայի բնույթին համապատասխան՝ նրանց առաջ



դրվող խնդիրներն ուսումնասիրելու ուղղությամբ։

Շրջանային ՎՀ-ների միջշրջանային խորհրդակցությունները գումարել այն շրջանների նկատմամբ, վորոնց տնտեսական խնդիրները ընդհանուր են։

8. Յերկրային, մարզային և հանրապետական ՎՀ-ները պետք է վերացնեն շրջանային ՎՀ-երի և կուսկոմների միջև գոյություն ունեցող անճիշտ հարաբերությունները, վորոնք յերբեմն ստեղծվում են շնորհիվ այն հանգամանքի, վոր շրջանային ՎՀ-ների ապարատները դեռևս բավականաչափ ամրացված չեն։

9. Պարտավորեցնել մարզային (յերկրային) և հանրապետական վերահսկիչ հանձնաժողովներին, վորպեսզի նրանք համապատասխան կուսկոմիտեների առաջ հարց բարձրացնեն վճռականորեն ամրացնելու շրջանային ՎՀ-ների քարտուղարների կադրերը և ստուգելու նրանց աշխատանքը, նպատակ ունենալով նրանց կցել այնպիսի ընկերների, վորոնք կարողանան այս աշխատան-

քը դուրս հանել։ Թույլ չտալ, վորպեսզի առանց մարզային և համապատասխան ՎՀ-ների համաձայնության, նրանք փոխադրվեն կուսշրջկոմներով։

10. Երկրային և մարզային ՎՀ-ները պարտավոր են սիստեմատիկ կերպով ՎՀ-ների կադրեր պատրաստել ու վերապատրաստել կուսակտիվի համար գոյություն ունեցող դասընթացների, ինչպես նաև կարճատև դասընթացներ կազմակերպելու, խորհրդակցություններ հրավիրելու և այլ միջոցներով։

11. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել բարելավելու գործերի քննությունը, հիմք ունենալով կուսակցության XIII համագումարի այն ցուցմունքները, վոր ՎՀ-ները «ներգործության միջոցներ վորոշելիս չպետք է շաբլոնով ղեկավարվեն»։ Քննության դրված յուրաքանչյուր առանձին հանցանքի նկատմամբ պետք է ունենալ անհատական մոտեցում և հաշվի առնել տվյալ հանցանքի կատարման բոլոր հանգամանքներն ու պայմանները։



12. Հարկավոր է, վոր Վերահսկիչ Հանձնաժողովներն ավելի մեծ չափով կիրառեն գործերը բջիջներում քննելու պրակտիկան և «այնպես կազմակերպեն իրենց աշխատանքը, վոր կուսանդամների մանր, պատահական հանցանքները, վորոնք վնասակար չեն կազմակերպության կյանքի համար և չեն վկայում այդ հանցանքը կատարող կուսանդամի փչացածության մասին, չդըրվեն վերահսկիչ հանձնաժողովի քննությանը, այլ վերացվեն ընկերական միջավայրում» («Վերահսկիչ Հանձնաժողովների աշխատանքի մասին» XIII կուսհամագումարի ընդունած բանաձևից)։

13. Ոժանդակություն ցույց տալ կուսկոլեկտիվներին՝ արդյունաբերական ու տնտեսական ձեռնարկությունների աշխատողների ղեկավար կազմի, յերիտասարդ մասնագետների, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների ղեկավարների պատասխանատվության զգացմունքը բարձրացնելու և նրանց համար արտադրության տեխնիկայի արագ տիրապետման ու միանձնյա

սիստեմի կիրառման պայմաններն ուժեղացնելու գործում և նրանց գործերը քննելիս՝ յուրաքանչյուր առանձին դեպքում հատուկ հոգածությամբ ստուգել մեղադրական նյութերը, հիշելով, վոր կոմունիստական կարգեր ստեղծելը տվյալ շրջանի մեր առաջնագույն պարտականություններից մեկն է հանդիսանում։

14. Գործը նախքան ՎՀ ի քննության փոխադրելը՝ քննադատական մոտեցում ունենալ և ստուգել մեղադրանքի փաստերը, հնարավորություն տալով․ վոր մեղադրվողները նախորոք ծանոթանան գործի նյութերի հետ, և ժամանակ տալով, վոր նրանք արդարացուցիչ տվյալներ ներկայացնեն, անհրաժեշտ մարդկանց կանչեն և այլն։

Գործի քննությունը կատարել․ իբրև կանոն, մեղադրվողի և բջիջի ներկայացուցիչների ներկայությամբ։

15. Բանվորներին կուսակցությունից վտարելու հարցը վճռելիս, անհրաժեշտ է այդ միջոցը կիրառել միմիայն այն դեպքում, յերբ տվյալ կազմակերպության պայ-



մաններում սպառված են ուղղումն ապահովող դաստիարակչական բնույթի միջոցները։

16. Հատուկ ուշադրություն հայտաբերել այն գործերը քննելիս, վորոնք կապված են կենցաղային հանցանքների պատճառով կուսակցությունից վտարելու հետ, մանավանդ ծայրամասային շրջաններում և ազգային հանրապետություններում։

17. Դատի տակ յեղած ընկերների գործերը քննելիս, անհրաժեշտ է հանգամանորեն ծանոթանալ դատական գործերին, հատկապես այն դեպքերում, յերբ դատարանը շահախնդրական մոմենտներ չի հավաստել․ այդպիսիների գործերը ՎՀ-ում քննելիս՝ հաշվի առնել նրանց անցյալում կատարած դրական աշխատանքը։

18. Հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է հիմնավորել և ճշտիվ ձևակերպել հանվելիք վորոշումները, թույլ չտալով, վոր այնտեղ մըտնեն չհաստատված փաստեր։ Հանձնարարել կազմհրահանգչական բաժնին գործի

դրվածքը բարելավելու մասին հրահանգչական նամակ կազմել։

19. Հանձնարարել կազմ-հրահանգչական բաժնին գործերի քննությունն արագացնելու նկատառումով մշակել կուսհանցանքների վերաբերմամբ ՎՀ-ի հանած վորոշումները կուսկոմիտեյի հետ համաձայնեցնելու կարգը՝ այդպիսին պարզացնելու իմաստով։

20, Անհրաժեշտ է, վոր վերահսկիչ հանձնաժողովներն ուսումնասիրեն կուսակցական կյանքի մի շարք հիմնական հարցերը։

Ուսումնասիրելով կազմակերպության մեջ յեղած հիվանդագին յերևույթները, Վերահսկիչ Հանձնաժողովները պետք է այդ հիման վրա, ժողկոմատների հետ միասին, միջոցներ մշակեն հիվանդագին յերևույթների վերացման և կուսկազմակերպությունների աշխատանքի բարելավման համար։

Անհրաժեշտ է կուսդաստիարակչական աշխատանք ծավալել մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու համար կուսակցական և տնտեսական քաղաքական հիմնական խնդիրների կատարման շուրջը։ Կիրառել բջիջ-



ների ժողովներում ՎՀ-ների զեկուցումները լսելու պրակտիկան, նախորոք ուսումնասիրելով նրանց աշխատանքը. այդ զեկուցումները պետք է լինեն այն դերի մասին, վորպիսին ունեն կոմունիստներն արտադրության մեջ, գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարեզում և պետապարատում, ինչպես նաև այն խնդիրների մասին, վորոնք դրված են նրանց առաջ աշխդիսցիպլինայի խախտումների դեմ պայքարելու և սոցմրցումն ու հարվածայնությունը զարգացնելու խնդրում։

21. Նկատի ունենալով կուսակցության դիրեկտիվների խախտման և կուսակցության գծի այլանդակման հետ կապված մի շարք գործերի բաց քննության քաղաքական-դաստիարակչական խոշոր նշանակությունը, անհրաժեշտ է, վոր Վերահսկիչ Հանձնաժողովները ավելացնեն գործերի քննությունները բջիջների ժողովներում, այդ գործերն ուշիուշով նախապատրաստելով։

22. Կուսանդամներին լայնորեն գրավել մասնակցելու կուսկոլեգիաների աշխատան-

դրվածքը բարելավելու մասին հրահանգչական նամակ կազմել:

19. Հանձնարարել կազմ-հրահանգչական բաժնին գործերի քննությունն արագացնելու նկատառումով մշակել կուսհանցանքների վերաբերմամբ ՎՀ-ի հանած վորոշումները կուսկոմիտեյի հետ համաձայնեցնելու կարգը՝ այդպիսին պարզացնելու իմաստով:

20, Անհրաժեշտ է, վոր վերահսկիչ հանձնաժողովներն ուսումնասիրեն կուսակցական կյանքի մի շարք հիմնական հարցերը:

Ուսումնասիրելով կազմակերպության մեջ յեղած հիվանդագին յերևույթները, Վերահսկիչ Հանձնաժողովները պետք է այդ հիման վրա, ժողկոմատների հետ միասին, միջոցներ մշակեն հիվանդագին յերևույթների վերացման և կուսկազմակերպությունների աշխատանքի բարելավման համար:

Անհրաժեշտ է կուսդաստիարակչական աշխատանք ծավալել մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու համար կուսակցական և տնտեսական քաղաքական հիմնական խնդիրների կատարման շուրջը: Կիրառել բջիջ-



ների ժողովներում ՎՀ-ների զեկուցումները լսելու պրակտիկան, նախորոք ուսումնասիրելով նրանց աշխատանքը. այդ զեկուցումները պետք է լինեն այն դերի մասին, վորպիսին ունեն կոմունիստներն արտադրության մեջ, գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարեզում և պետապարատում, ինչպես նաև այն խնդիրների մասին, վորոնք դրված են նրանց առաջ աշխդիսցիպլինայի խախտումների դեմ պայքարելու և սոցմրցումն ու հարվածայնությունը զարգացնելու խնդրում:

21. Նկատի ունենալով կուսակցության դիրեկտիվների խախտման և կուսակցության գծի այլանդակման հետ կապված մի շարք գործերի բաց քննության քաղաքական-դաստիարակչական խոշոր նշանակությունը, անհրաժեշտ է, վոր Վերահսկիչ Հանձնաժողովները ավելացնեն գործերի քննությունները բջիջների ժողովներում, այդ գործերն ուշիուշով նախապատրաստելով:

22. Կուսանդամներին լայնորեն գրավել մասնակցելու կուսկոլեկտիվների աշխատան-

-քին, հատուկ ուշադրություն դարձնելով, վորպեսզի կայուն կուսանդամներից մշտական ակտիվ ամրացվի ՎՀ-ների շուրջը՝ գործերը նախապատրաստելու և քննարկելու կուսակցական պրոբլեմները և հիվանդագին յերևույթների պատճառներն ուսումնասիրելու և մշակման յենթարկելու համար։

Անհրաժեշտ է կուսատենակալների պարբերական հաշվետվություններ կազմակերպել բջիջներում այն աշխատանքի մասին, վոր նրանք կատարում են ՎՀ ներում, և ավելի մեծ թվով կուսատենակալներ գործի լծել ձեռնարկություններից, խորհտնտեսություններից և ՄՏԿ-ներից։

23. Կուսկոլեգիաների աշխատանքի ընդհանրացումը և փորձի փոխանակումը պետք է բարելավել կենտրոնում և տեղերում։ Դրա համար անհրաժեշտ պայման է հանդիսանում այն, վորպեսզի բարելավ վիճակում դրվեն ԿՎՀ-ի և տեղական ՎՀ ների փոխադարձ ինֆորմացիաները, կանոնավոր կերպով լուսաբանվեն կուսկոլեգիաների փորձն



ու աշխատանքը ԿՎՀ-ԲԳՏ-ի և տեղական ՎՀ-ԲԳՏ-ների ժուռնալներում։

24. Սիստեմատիկ և լայնորեն լուսաբանել կուսկոլեգիաների աշխատանքը կուսակցական և բանվորական հասարակայնության առաջ, ինչպես ընդհանուր մամուլի, այնպես և գործարանների, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների (տպագիր և պատի) թերթերի միջոցով։

25. Կոնֆլիկտային հանձնաժողովների դերի ուժեղացումը կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարում, պահանջում է արմատապես վերակառուցել նրանց աշխատանքի սիստեմն ու մեթոդները, հիմք ունենալով «ՀամԼԿՅԵՄ-ի ՎՀ-ների խնդիրների մասին» ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի և ՀամԿ(բ.)Կ ԿՎՀ-ի ընդունած վորոշումը։

Սույն վորոշման կատարումն ապահովելու համար Վերահսկիչ հանձնաժողովները պետք է ուժեղացնեն իրենց ամենորյա ղեկավարությունը ՀամԼԿՅԵՄ-ի կոնֆլիկտային հանձնաժողովների նկատմամբ, նշանակելով այնպիսի ներկայացուցիչների, վո-

րոնք կարողանան մշտական մասնակցություն ունենալ կոնֆլիկտային հանձնաժողովների վողջ աշխատանքին։ Ներկայացուցչությամբ չսահմանափակվելով, Վերահսկիչ Հանձնաժողովները պետք է սիստեմատիկ կերպով ստուգեն կոնֆլիկտային հանձնաժողովների աշխատանքը, լսեն նրանց զեկուցումները, կոնկրետ ցուցմունքներով օգնեն նրանց գործերի քննությանը և, դրա հետ միասին, կոնֆլիկտային հանձնաժողովներին մասնակից դարձնեն կուսակցության Վերահսկիչ Հանձնաժողովների աշխատանքին։

ՀամԼԿՅԵՄ ԿԿ ի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել Համ. ԼԿՅԵՄ-ի կոնֆլիկտային հանձնաժողովների գործնական աշխատանքին, հատկապես տեղերում աշխատողներ ընտրելու խնդրին։



ՀԵՏ ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
ГС Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բանգյուղտեխչության աշխատանքի կազմակերպումը տնտեսական շինարարության կապակցությամբ . . . . . . . . . . 3
2. Ապահովել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի հունիսյան պլենումի վորոշումների կատարման ստուգումը 37
3. ՎՀ-ների կուսկոլեգիաների աշխատանքի մասին 66
4. Կուսկոլեգիաների աշխատանքի խնդիրների մեջ թողների մասին . . . . . . . . . . 71

ՀՀ Ազգային գրադարան
NL0184621

С 32-И / 92

ԳԻՆԸ 25 ԿՈՊ. (3 Մ.)

ՀԱՍՀ ՊԵՏՀՐԱՏ

ПОСТАНОВЛЕНИЯ III ПЛЕНУМА ЦЕНТРАЛЬНОЙ КОНТРОЛЬНОЙ КОМИССИИ ВКП (б)

Госиздат ССР Армении
Эривань—1931